Azg Ազգ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2007 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 234 (3886)

Նվազեցվել է Հայաստանին տրվելիք օգնությունը

Ինչպես հայտնում է Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը, ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի բանակցողները համաձայնության են եկել Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին 2008 ֆինանսական տարում տրամադրվելիք օժանդակության հարցում: Համաձայնագրով նախատեսվում է Հայաստանին տրամադրել 58,5 մլն ԱՄՆ դոլար, իսկ Լեռնային Ղարաբաղին՝ 3 մլն դոլարի ոչդրակի օգնություն: Համաձայնագիրը շուտով կընդունվի Կոնգրեսի երկու պալատներում: Հայաստանին եւ Արցախին տրամադրվելիք օժանդակության չափն ավելի փոքր է, քան անցյալ տարի: Համաձայնագրով նաեւ չեղյալ է հայտարարվում վարչախմբի վերջերս արված առաջարկը՝ հրաժարվել Հայաստանին եւ Ադրբեջանին ռազմական հավասար օժանդակություն ցույց տալու 2001-ի իր երաշխավորումից:

Ինչպես նշել է Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի նախագահ Արամ Համբարյանը, իրենք մտահոգված են Հայաստանին եւ ԼՂ-ին տրամադրվելիք օժանդակության կրճատումից: Օրինագծով 50,5 մլն դոլար է նախատեսվում Վրաստանի եւ 19 մլն դոլար՝ Ադրբեջանի համար:

Մադրիդում ԵԱՀԿ ԼՂ հարցով Մինսկի խմբի փոխանցած փաստաթղթին Հայաստանը դեռ համաձայնություն չի տվել

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մադրիդում նոյեմբերի 29-30-ին ԵԱՀԿ ԱԳ նախարարների հերթական հանդիպմանը քննարկումները փոքր ավելի բարդ էին, քան նախորդ տարի: **«Ազգը»** մանրամասն ներկայացրել է մադրիդյան քննարկումները, միայն նշենք, որ երեկ հրավիրած ասուլիսում ԱԳ նախարար **Վարդան Օսկանյանը** եւս մեկ անգամ հիշեցրեց, որ հերթական անգամ չընդունվեց խաղաղական հայտարարություն: Մասնակիցներն ընդհանուր հայտարարի չեկան ԵԱՀԿ բարեփոխման, ահաբեկչության դեմ պայքարի, հակամարտությունների կարգավորման, սպառազինությունների վերահսկման պարբերությունների շուրջը:

Օսկանյանը, ի թիվս անհանդուրժողականության եւ խտրականության դեմ պայքարի, Աֆղանստանում ԵԱՀԿ ներգրավվածության, մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի, բնապահպանության առնչությամբ որոշումների կարետության, ընդգծեց ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցություններին առնչվող մադրիդյան հանդիպումները: **«Ազգն»** այդ կապակցությամբ ներկայացրել է ինչպես Հայաստանի եւ Ադրբեջանի, այնպես էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների անդրադարձները հանդիպումներին:

Դեկտեմբերի 4-5-ին նախարար Օսկանյանն աշխատանքային այցով Մոսկվայում էր՝ հագեցած օրակարգով: ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ հանդիպմանը լավ մթնոլորտում քննարկել են հայ-ռուսական հարաբերությունները, մտքեր են փոխանակել տարածաշրջանային եւ գլոբալ խնդիրների (ԵՍԶՈՒ պայմանագիր, Կոսովոյի հիմնահարց, ԵԱՀԿ բարեփոխումներ, ռուս-վրացական հարաբերություններ եւ դրանց ազդեցությունը Հայաստանի վրա) շուրջը, անդրադարձել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին:

Տես էջ 2

Իրաք. թուրքական ներխուժում եւ Ռայսի անսպասելի այցելություն

Երեկ թուրքական բանակի ստորաբաժանումները Հյուսիսային Իրաք են ներխուժել քուրդ գրոհայիններին դեմ «հակահաբեկչական գործողություն» իրականացնելու: Իրաքյան լրատվամիջոցները հաղորդում են 300-1500 թուրք զինվորների եւ տանկային մի ստորաբաժանման ներխուժման մասին:

Դիտորդներից ոմանք կարծում են, որ թուրքերն Իրաք են մտել դեկտեմբերի 16-ին իրենց ռմբակոծած ու հրթիռակոծած քրդական տարածքներում «զտումներ» իրականացնելու համար: Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի խոսքերով, «հանրապետության բոլոր գերատեսչությունները աշխատում են միասնական ծրագրով», որը վերաբերում է ՔԲԿ-ի դեմ մղվող պայքարին: Բայց առայժմ չի խոսվում Հյուսիսային Իրաք թուրքական լայնածավալ ներխուժման մասին:

Թուրքերի ներխուժումը համընկավ ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի անակնկալ այցին: ՌԻԱ գործակալության տվյալներով, Ռայսը երեկ Բաղդադ է ժամանել եւ երկրի հյուսիսում՝ նավթառատ Քիրքուք քաղաքում բանակցել է տեղացի ղեկավարների հետ: Արդեն նա Բաղդադ է վերադարձել Իրաքի կենտրոնական իշխանությունների հետ հանդիպելու:

Հաղորդվում է, որ քուրդ եւ արաբ խառը բնակչություն ունեցող Քիրքուքում նախատեսված էր հանրաքվե անցկացնել ինքնավար Իրաքյան Քրդստանին միանալու հարցով, բայց հանրաքվեն հետաձգվել էր քուրդ-արաբական լուրջ տարաձայնությունների պատճառով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մելգոնյան վարժարանը փակելու որոշման մեջ ՀԲԸՄ ատենապետն անդրդվելի է

«Ազատ ձայն» կիրակահայ անկախ ամսագրի վերջին (թիվ 40) համարում տպագրվել է «ՀԲԸՄ-ի ատենապետը՝ անդրդվելի» հոդվածը, որը տեղեկացնում է նոյեմբերի 8-11-ը Կիպրոս ժամանած Բարեգործականի կենտրոնական վարչության ատենապետ Պերճ Սեդրակյանի հետ ռուսաստանցի մեծահարուստ հայերի հանդիպման մասին:

«Այս այցելությունը տեղիք տվեց Մելգոնյան վարժարանի հավանական վաճառքի մասին շատ շուկերի: Շուկերը ծանրակշիռ դարձան, երբ Սեդրակյանը նոյեմբերի 11-ին պատշգամբային հանդիպում ունեցավ Բարեգործականի Կիպրոսի մասնաճյուղերի ատենապետների հետ: Ի բարեբախտություն մեզ, նշյալ հանդիպմանը ներկա են եղել նաեւ մի քանի գործարար մեծահարուստ հայեր Ռուսաստանից, որոնք հարցուփորձ են արել Մելգոնյան վարժարանի մասին: Պրն Սեդրակյանն անմիջապես պատասխանել է, որ «այս հարցն արդեն փակված է»:

Հոդվածում նաեւ նշվում է, որ Բարեգործականի հայաստանյան կրթական ծրագրերում ընդգրկված ռուսահայերին չի բավարարել այդ պատասխանը եւ նրանք փորձել են տարհամոզել Սեդրակյանին հետեւյալ առաջարկով. «Մենք պատրաստ ենք Մելգոնյանի նոր ծրագրի համար ձեզ անվճար հողատարածք տրամադրել Հայաստանում, նաեւ կառուցել դպրոց եւ հանձնել ՀԲԸՄ-ի տնօրինությանը միայն մեկ պայմանով՝ վերաբացել Մելգոնյան վարժարանը: Նաեւ տրամադիր ենք վերջինիս ընթացիկ ծախսերին մասնակից լինել: Այս բոլորը հոժարակամ ենք անելու, որովհետեւ խորապես հավատում ենք Մելգոնյանի առաքելությանը»:

Ըստ հոդվածի, Սեդրակյանը գնահատել է վերոնշյալ մարդկանց հայրենասիրական ոգին եւ խորհուրդ է տվել իրենց առաջարկը գրավոր ներկայացնել Բարեգործականի հայաստանյան գրասենյակին: Այդ ասելուց հետո նա շտապել է օդանավակայան:

Որոշ ժամանակ անց «Ազատ ձայն» ամսագրի խմբագրատունը նշյալ ռուսահայերից տեղեկացել է, որ Ամերիկայի կենտրոնի գրասենյակը էլեկտրոնային նամակ է ուղարկել նրանց՝ հորդորելով համագործակցել Բարեգործականի հայաստանյան գրասենյակի հետ, իսկ Մելգոնյանի մասին՝ ոչ մի խոսք:

«Այս ամենից վերեւին հայտնի է դառնում, որ Բարեգործականի կենտրոնը՝ գլխավորությամբ պրն Պերճ Սեդրակյանի, մնում է անդրդվելի Մելգոնյանի փակման որոշման մեջ եւ խուլ ու համր է ձեւանում նույնիսկ նման շինիչ առաջարկների դիմաց»:

Ռ. Պ.

Բարզանին չի հանդիպել Ռայսի հետ

Ի նշան բողոքի թուրքական բանակի գործողությունների դեմ, Հյուսիսային Իրաքի քրդական վարչակազմի ղեկավար Մեսուդ Բարզանին հրաժարվել է հանդիպել Իրաք ժամանած ԱՄՆ-ի պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հետ: Քրդական կողմը հայտարարել է, որ Հյուսիսային Իրաքում թուրքական բանակի իրականացվող գործողության պատասխանատվությունը պետք է սանձնի Միացյալ Նահանգները, քանի որ Իրաքի օդային տարածքի պատասխանատուն ԱՄՆ օդուժն է:

ՀԱՍԱՐԱՈՍ

Հրավիրվել են միջազգային դիտորդներ

Ազգային ժողովի մամուլի կենտրոնից հաղորդում են, որ դեկտեմբերի 18-ին ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը 2008-ի նախագահական ընտրությունների դիտորդական առաքելության առաջարկության հրավեր է ուղարկել ԵԽԽՎ-ին, ԵԱՀԿ ԽՎ-ին, Եվրոխորհրդարանին, ԱՊՀ ՄԽՎ-ին:

Տեր-Պետրոսյանի հանդիպումները շարունակվում են

Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջադրման գրասենյակից հաղորդում են, որ դեկտեմբերի 18-ին Հայաստանի առաջին նախագահը իր տանը հանդիպել է Հայաստանում Շվեդիայի դեսպան Հանս Գունար Ադենի հետ: Մեկ ժամ տեւած զրույցի ընթացքում քննարկվել են Հայաստանի ներքին քաղաքական իրավիճակի, ընտրական գործընթացի, արտաքին հարաբերությունների, ղարաբաղյան հակամարտության բազմաթիվ հարցեր:

Հանրահավաքներից հոգնե՞լ են

Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջադրման քաղաքացիական նախաձեռնությունների գրասենյակից հաղորդել են, որ դեկտեմբերի 22-ին ՀՀ կառավարության նիստերի դահլիճում տեղի կունենա Լեւոն Տեր-Պետրոսյանին աջակցող կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների եւ քաղաքացիական նախաձեռնությունների պատվիրակների հանրապետական կոնգրես:

Ընդդեմ թանկ եթերաժամերի

Արթուր Բաղդասարյանի առաջադրման գրասենյակը հաղորդագրություն է տարածել, որ եթերաժամերի համար նախատեսված գների պայմաններում նախընտրական 70 մլն-ի հիմնադրամը բավարար չէ բնականոն քարոզչություն կազմակերպելու համար: Առաջարկվում է ԿԸՀ քննարկմանը ներկայացնել համապատասխան որոշման նախագիծ, որը «թեկնածուներին հնարավորություն կտա առավել ազատ եւ տեղեկության մեջ հայեցողաբար կառուցելու հեռուստատեսային քարոզչությունը եւ հանրային լսարանին մատուցել օրվա ամենադիտվող ժամերին»:

«Գելափը» շատ հաց ու պանիր պիտի ուտի, որ ինձ հասնի»

Սոցիոլոգ Ադիբեկյանը դարշյալ ասպարեզում է

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Գելափն» ասում է՝ ով կընտրվի, բայց չի կարողանում ասել՝ ինչու: Իսկ ես կարող եմ ասել, ես զոնդաժ եմ անում, ավելի խորն եմ նայում եւ կարող եմ ասել՝ ով ինչի կընտրվի: Ես «Գելափին» չեմ հավատում: «Գելափը» շատ հաց ու պանիր պիտի ուտի, որ ինձ հասնի», երեկ «Հայաստ» ակումբում «Գելափի» ուսումնասիրության վրա սպեր գցելու եւ սեփական սոցիոլոգիական հարցումների արժեքն ընդգծելու համար հայտարարեց «Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնի նախագահ **Սիարոն Ադիբեկյանը**:



Ընտրությունների ժամանակ իր սոցհարցումներով հայտնի սոցիոլոգը Հայաստանի նախագահական ընտրությունների նախաքննչական փուլը սկսել է 2007-ի հունվարից, որպեսզի հասկանա փոփոխությունները խորհրդարանական ընտրություններից առաջ եւ հետո: Վերջին սոցհարցումը Ադիբեկյանն արել է հոկտեմբերին եւ, ինչպես երեկ հայտնեց, մեկն էլ կանի մինչեւ Ամանոր: Սիարոն Ադիբեկյանի հոկտեմբեր ամսվա սոցիոլոգիական հարցման արդյունքները պարզել են, որ խորհրդարանական ընտրությունները մեծապես նպաստել են վարչապետ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի, ինչպես նաեւ «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանի վարկանիշի բարձրացմանը: Վերջինիս վարկանիշը սակայն իջել է թիվ 15 ընտրատեղամասի ընտրություններին մասնակցելուց հետո: Խորհրդարանական ընտրություններից հետո կայուն է մնացել ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանի վարկանիշը, նվազել են Վազգեն Մանուկյանի եւ Արտաշես Գեղամյանի վարկանիշները, կրկնապատկվել է հանրապետության առաջին նախագահին համակրողների քանակը, սակայն «չնչին բարձրությամբ». հունվարի 1,3 տոկոսից դարձել է 2,7 տոկոս:

Տես էջ 2

Դպրոցների տնօրենների հետ տարվելու է շարունակական աշխատանք

Հանրակրթության ոլորտի, վարուբարքի մասին խոսելիս մեր կամքից անկախ դժգոհության նետերն ուղղում ենք դպրոցների տնօրենների վրա, լավ իմանալով նրանց պատասխանատվության ու հեղինակության չափուկշռի արժեքը ոչ միայն բանիմաց սերունդ կրթելու, այլեւ ընդօրինակելի վարքագիծ դրսեւորելու, բարձր գաղափարներ եւ արժեքներ կրելու առումներով: «Նմանն զնմանին գտանի», ասում է ժողովրդական ասացվածքը եւ դրա ճշմարտացիությունը վերանայման կարիք երբեւէ չի ունեցել: Հազիվ թե խորագիտակ ու բարեկիրթ դպրոցի տնօրենն իր շուրջը երկար հանդուրժի դասաժամերը ժամավաճառության վերածող, կոշ ու կոմիս վարվելակերպով ուսուցչին, մինչդեռ դպրոցը բիզնեսի միջոց դիտող տնօրենը ձգտում է իր կողքին ունենալ հենց այդ որակներով աչքի ընկնող ուսուցիչների:

Խորհրդային դպրոցին փոխարինելու եկած եվրոպական կրթության նոր մոդելը, որ մեզանում ներդրվում է «Կրթության որակ եւ համապատասխանություն» ծրագրով, վերապատրաստման դասընթացներ է ներառում ոչ միայն ուսուցիչների, այլեւ դպրոցների տնօրենների, դաստիարակության գծով փոխտնօրենների եւ այլոց համար: Կրթության ազգային ինստիտուտում 2004-ից անցկացված վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 1400 տնօրեն: Հասկանալի է, որ հրավիրված մասնագետները տնօրենների հետ քննարկել են նոր կրթակարգը, գնահատման համակարգը, բովանդակային ու կազմակերպական բազմաթիվ հարցեր՝ որոնց բախվում են ուսումնական ընթացքը կազմակերպելիս:

Պարզելու համար, թե այդ դասընթացներում ուսումնական հարցերից զատ ինչ տեղ են գրավում հանրակրթության ոլորտում աչք ծակող բացասական երեւույթները, որ կատարվում են հենց տնօրենների թողտվությամբ, զրուցեցինք կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրեն **Գագիկ Մելիքյանի** հետ: Նշելով, որ հիշյալ ծրագիրն իր վերջնակետին կհասնի եկող տարի՝ դպրոց տանելով կրթական ու դաստիարակչական նոր մեթոդներ, Մելիքյանն ընդգծեց, որ տնօրենների հետ իրենց աշխատանքը ծրագրի ավարտով չի եզրափակվում ու հետայսուս շարունակական է լինելու: «Նրանց հետ քննարկելու դեռ շատ հարցեր կան, ամենահրատապը ավագ դպրոցի հայեցակարգի մշակումն է՝ հասունացած ժամանակի ու ծնողի պահանջով: Որպես ինքնուրույն եւ առանձին կառույց ավագ դպրոցն ունի ինչպես ֆինանսական, այնպես էլ բովանդակային ու կազմակերպական խնդիրներ, որոնցից է կախված հոսքային ուսուցմամբ կրթության շարունակականության ապահովումը: Ավագ դպրոցի կայացումը ոչ միայն դպրոցից բուն անցումը սահուն դարձնելու ծնողի պատվերն է, այլեւ պետության պահանջն է՝ բանիմաց ու երկրի համար պատասխանատու քաղաքացի ունենալու: Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ են ինչպես խորագիտակ ուսուցիչներ, այնպես էլ իրենց գործն ազնվորեն ու բարեխղճորեն կատարող տնօրեններ», ասում է Մելիքյանը: Տնօրենների հետ զրույցներում իրենք չեն շրջանցում հասարակության դժգոհությունն առաջացնող այնպիսի երեւույթների՝ վերաբերյալ բացախոսությունը, ինչպես դպրոցական կոռուպցիան, բռնությունը: Մելիքյանը կարծում է, որ թեպետ կաշառակերության գոյության մեղքի առյուծի բաժինը տնօրեններինն է, սակայն դա մի մասը պատկանում է ծնողներին: «Կարծում եմ, կոռուպցիոն երեւույթների առաջացման պատճառների մի մասը պետք է փնտրել ծնողների մտածողության մեջ: Հարցն այն է, որ նրանցից շատերը գաղափար չունեն իրենց իրավունքների մասին ու փորձում են պաշտպանված զգալ ուսուցիչներին ու տնօրեններին այդկերպ սիրաշահելով: Դա հետեւանք է տեղեկատվության պակասի, ինչը փորձում ենք լրացնել դպրոցներին անվճար տեղեկագրեր ու պարբերականներ բաժանելով»: Դպրոցի տնօրենների խղճին է հանձնված այդ տեղեկագրերը դպրոցի գրադարանի մի անկյունում մոռացության տալու կամ հանդիպումների ու քննարկումների միջոցով ծնողին իրազեկելու ցանկությունը: Մելիքյանի հետ մեր զրույցը առավելապես բեւեռվեց հասարակական գիտակցություն ու վարքագիծ ձեւավորելու գործում դպրոցի ունեցած ազդեցության վրա, որի գլխավոր գործոնը եղել ու մնում է դպրոցական, ավելի ճիշտ՝ նախադպրոցական դաստիարակությունը: «Անշուշտ, դաստիարակությունը կրթության բաղադրիչներից է, որին վերջին տարիներին քիչ ուշադրություն է հատկացվել: Դպրոցն այս առումով մեծ անելիք ունի, սակայն արդարացի չէ միայն նրանից պահանջելը: Բարձր գաղափարներով սնված բարեկիրթ հասարակություն ունենալու համար խոր փոփոխություններ են անհրաժեշտ, դրա համար պետք է ստեղծվեն համապատասխան սոցիալական պայմաններ: Եթե ծնողը երեխային բարձր արժեքներ է քարոզում, իսկ հեռուստատեսությունն ու բակի ընկերները՝ գռեհկություն ու լպիրշություն, դրական որեւէ փոփոխություն դժվար է ակնկալել: Դրա համար ժամանակ է պետք, գուցե 1-2 սերունդ պիտի անցնի, մինչեւ բոլոր ոլորտներում ապարեզ գան բարձր արժեքներ կրող, կենցաղային մտածողությունից ձերբազատված անհատներ: Դրան հասնելու ճանր բեռը պիտի կրեն կրթության ոլորտի պատասխանատուները, հատկապես դպրոցների տնօրենները՝ ամենայն պատասխանատվությամբ ջանքեր թափելով կրթության որակ, հարգալից մթնոլորտ, անկաշառ հարաբերություններ հաստատելու համար»:

Մելիքյանը հույս ունի, որ այս տարի հանրակրթության դպրոց վերադարձած հասարակագիտություն առարկան որոշակի դրական ազդեցություն կունենա իր առարկի եւ երկրի համար պատասխանատու քաղաքացի դաստիարակելու առումով: Թեպետ այդ պահանջը դրված է բոլոր առարկաների, ավելի ճիշտ՝ դասավանդող բոլոր ուսուցիչների առջեւ՝ «Հիմա ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ խիստ զգալի է արժեքային համակարգի ձեւավորման անհրաժեշտությունը: Սա այն գլխավոր պահանջն է, որ դնում ենք վերապատրաստվող տնօրենների եւ ուսուցիչների առջեւ»:

Սուր հարցադրումներին, ինքնաքննադատությանը պատրաստ լինելու քաջությունն այն գլխավոր հատկանիշն է, որով օժտված պիտի լինեն ոչ միայն դպրոցի տնօրենները, այլեւ բոլոր նրանք, ովքեր իրենց արարքների համար պատասխանատու են հասարակության առջեւ: «Միանգամայն համաձայն եմ, որովհետեւ երբ գովաբանում ես քեզ, հասարակությանը հեռացնում ես քեզանից, իսկ երբ խոսում ես նրա սրից՝ մոտեցնում ես»:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Գելափը» շատ հաց ու պանիր պիտի ուտի, որ ինձ հասնի»

1-ին էջից

Ահարոն Ադիբեկյանը շեշտեց, որ հոկտեմբեր ամսվա իր սոցհարցման արդյունքները դեռեւս աշխատանքային նյութ են եւ մինչեւ փետրվար կփոխվեն: Հոկտեմբերի հարցման համար «Սոցիոմետր»-ը դիմել է 2200 մարդու, որոնցից հարցերին պատասխանել է 1650-ը: Հարցմանը պատասխանածների 60-65 տոկոսը հայտնել է, որ կմասնակցի ընտրություններին, 33 տոկոսը չի հետաքրքրվում քաղաքական իրադարձություններով եւ չի էլ հետեւում դրանց:

Ադիբեկյանի ներկայացմամբ, վարչապետ Սերժ Սարգսյանի գործունեությունը դրական է գնահատել հարցվածների 60 տոկոսը, 30 տոկոսը կարծիք է հայտնել, որ կարելի էր ավելի լավ աշխատել, մնացյալը նշել է, որ նախկին վարչապետներն ավելի լավ են աշխատել: Ուշագրավ է, որ հարցվածների 27 տոկոսն է ասել, թե իր ձայնը կտա Սերժ Սարգսյանին, բայց 48 տոկոսը համոզմունք է հայտնել, որ նախագահ կընտրվի հենց ՀՀԿ նախագահը:

Հարցվածների 5,4 տոկոսն ասել է, որ իր ձայնը կտար Ռաֆֆի Հովհաննիսյանին, 4,8 տոկոսը՝ Արթուր Բաղդասարյանին, 1,3 տոկոսը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին, 2 տոկոսը՝ Արշաքես Գեղամյանին, հունվարին 0 տոկոս վարկանիշ ունեցող ՀՅԴ թեկնածու Վահան Հովհաննիսյանին՝ 1,4 տոկոսը, իսկ Վազգեն Մանուկյանին՝ 1,1 տոկոսը: Նախագահական ընտրատոմսերից դուրս մնացած Ռաֆֆի Հովհաննիսյանի ձայները, բանախոսի կանխատեսմամբ, կգնան կամ Վահան Հովհաննիսյանին, կամ Արթուր Բաղդասարյանին:

Ահարոն Ադիբեկյանի հերթականությամբ առաջին տեղում է Սերժ Սարգսյանը, հետո Արթուր Բաղդասարյանը, ապա Լեւոն Տեր-Պետրոսյանը, Արշաքես Գեղամյանը, Վահան Հովհաննիսյանը, Վազգեն Մանուկյանը: Սոցիոլոգի խոսքով, առաջին նախագահին չսիրողները երկու անգամ շատ են, քան Գեղամյանին չսիրողները, եւ հնարավոր է, որ դա հաշվին Գեղամյանը մեկ հորիզոնական բարձրանա: Ի դեպ, Ադիբեկյանը նշեց, որ Լեւոն Տեր-Պետրոսյանին ձայն տալու պատրաստակամություն են հայտնել հիմնականում նրա իշխանության տարիներին պաշտոն ունեցած եւ հետագայում կորցրած մարդիկ, մի որոշ խավ ներկայիս պաշտոնյաներից, հավանաբար հոգնած ներկաներից, ինչպես նաեւ որոշ բարձրագույն եւ միջնակարգ կրթություն ստացածներ: Առաջին նախագահի հիմքերը, ըստ սոցիոլոգի, թույլ են մարզերում:

«Ազգի» հարցին, թե ում ձայներն են կազմել ՀՅԴ թեկնածու Վահան Հովհաննիսյանի 1,4 տոկոսը, Ադիբեկյանը պատասխանեց. «ՀՅԴ-ն ջոկերի դերում է հանդես գալիս եւ փորձում է ձայն տանել երկու դաշտերից էլ՝ թե՛ ընդդիմության եւ թե՛ իշխանության: Ֆիզիկայի այս օրենքը կամ դրական արդյունք է տալիս, կամ ոչնչացնում: ՀՅԴ-ն այս ռեզոնանսի վրա է հույսը դրել, բայց չեղավ, նա պիտի հասակ կողմնորոշվի, իմանա որտեղից է ձայներ տանելու»:

ՄԵՎԱՆԵՍ ԼԻՔ

Ձկնորսությունն արգելված է, բայց ո՞ւմ է դա հուզում բացի պատասխանատուներից ու մի խնի բնապահպաններից

ՀՀ բնապահպանության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնից խմբագրությանը հղված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ բնապահպանության նախարարի հրամանով նոյեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 25-ը Սեւանա լճում արգելված է արդյունագործական ձկնորսությունը:

Դեկտեմբերի 18-ի դրությամբ բնապահպանական տեսչության՝ մայրաքաղաքի շուկաներում իրականացրած սուգայցերով առգրավվել է շուրջ 200 սիգ ձուկ:

Սեւանա լճի վրա եւ ափամերձ տարածքներում բնապահպանական տեսչության եւ «Սեւան ազգային պարկի» աշխատակիցների համատեղ իրականացրած վերահսկողության արդյունքում առգրավվել է 206 ձկնորսական պոլիէթիլենային ցանց, 112 խեցգետնաորսիչ սարք, 3 լողամիջոց, 40 կգ մանրածածան եւ 28 կգ սիգ ձուկ:

Եթե վիճակը հիշ թե շատ բարվոք է մայրաքաղաքի շուկաներում, ապա նույնը չի կարելի ասել լճի առափնյա տարածքների մասին, որ կարելի է հանդիպել ապօրինի որսված ձուկ առաջարկողների: Սեփական դիտարկումներով նման հետեւության հանգած բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը դեկտեմբերի 18-ին կայացած խորհրդակցության ժամանակ բնապահպանական տեսչության եւ «Սեւան ազգային պարկի» ղեկավարներին հանձնարարել է ուժեղացնել վերահսկողությունը անմիջապես լճի վրա եւ նավերի օգնությամբ հայտնաբերել ապօրինի դրված ցանցերը, միջոցառումներ իրականացնել որսը կանխելու ուղղությամբ:

Դեկտեմբերի 25-ին ավարտվում է արգելանքի շրջանը: Նախարարը հանձնարարել է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այդ շրջանում իրականացվելիք օրինական որսի դիմաց բնավճարների հնարավորինս լրիվ մուտքագրումն ապահովելու ուղղությամբ:

ՍՈՒՍԱՆՆԱ ՍՏԱՊԱՆՅԱՆ

Մադրիդում ԵԱՀԿ ԼՂ հարցով Մինսկի խմբի փոխանցած փաստաթղթին Հայաստանը դեռ համաձայնություն չի տվել

1-ին էջից

Մոսկվայում Օսկանյանը հանդիպել է նաեւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժայի հետ, քննարկել կազմակերպության շրջանակներում հետագա համագործակցությունը, ինչպես նաեւ հաջորդ տարի այդ կազմակերպությունում Հայաստանի նախագահության հետ կապված հարցեր:

Հայաստանում հավատարմագրված, բայց Մոսկվայում նստավայր ունեցող դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ հանդիպմանն էլ Օսկանյանը ներկայացրել է Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնայնություններն ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերջին զարգացումները, Հայաստանում իրականացվող բարեփոխումների եւ տնտեսական զարգացումը, ինչպես նաեւ նախագահական ընտրություններից առաջ ստեղծված իրավիճակը:

Օսկանյանի խոսքերով, հատուկ շեշտադրում է արվել ՎՈՒԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա) գործունեությանը՝ նկատի ունենալով ՄԱԿ-ի շրջանակներում մեր տարածաշրջանի «սառեցված հակամարտությունների» առնչությամբ ընդհանրական մոտեցումներով նախաձեռնությունները:

Դեկտեմբերի 7-ին աշխատանքային այցով Ստրասբուրգում արտգործնախարարը հանդիպել է ԵՒ ԱԳ նախարարների կոմիտեի մոնիտորինգի Ագոյի հանձնախմբի անդամներին: Ագոյի խմբի ղարաբաղյան հարցում ներգրավվածությունն էլ, ըստ Օսկանյանի, այնքանով է, որքանով խաղաղ կարգավորումը Հայաստանի պարտավորությունն է:

ԵՒ գլխավոր քարտուղար Թերի Դեւիսի հետ էլ քննարկվել են Նախիջեւանում մշակութային ժառանգության իրավիճակը գնահատելու նպատակով փաստահավաք առաքելության այցին առնչվող հարցեր, ղարաբաղյան ու նախընտրական հարցեր: Ընդ որում, այդ առաքելությունն ամենայն հավանականությամբ կարող է իրականություն դառնալ հաջորդ տարվա առաջին քառորդում: Օսկանյանի ներկայացմամբ, Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղն արդեն իսկ համաձայնել են իրենց տարածքում դիտարկումներին:

Ամեն դեպքում, Վարդան Օսկանյանը լավատես է ղարաբաղյան հարցի կարգավորման բանակցություններում, եւ այն, որ վարչապետ Սերժ Սարգսյանը եւս լավատես է, միայն դրական է: Ավելին, վարչապետը տեղեկացված է բանակցությունների ընթացքից, բայց չէր կարող հայտարարել, թե արդեն իսկ Հայաստանը համաձայնություն է տվել Մադրիդում ներկայացված թարմացված առաջարկներին:

«Ցանկություն կա հնարավորինս շուտ կարգավորման սկզբունքների շուրջը համաձայնության գալու, քանի որ դրանից հետո խաղաղության պայմանագիրն է, որ շատ բարդ ու երկարատեւ աշխատանք է պահանջելու», գտնում է Օսկանյանը: Ինչ վերաբերում է նույն բանակցային գործընթացի առնչությամբ, լրագրողների ձեւակերպմամբ, նախագահ Քոչարյանի հոռետեսությանը, ապա, Օսկանյանի խոսքերով, հոռետեսը տեղեկացված լավատեսն է, եւ երեւի նախագահն այլ կերպ է նայում հարցին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԶ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հավատարիմ (գրավոր) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Հանձնարար. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Հանձնարարական ծառայություն
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են
Համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ կամ PR նշումով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Ժողովրդի դժգոհությունն օգտագործելով չի կարելի հեղափոխություն անել

Այսպես է կարծում Վազգեն Մանուկյանը

Ամերիկյան հետախուզության ղեկավար Ալեն Դալեսը ժամանակին խորհրդային Միությունը փլուզելու ենթատեքստով մի շարք ծրագրային ցուցումներ էր տվել իր ենթականերին: Հիմա բառացի չեմ հիշում, բայց այդ ցուցումների մեջ այսպիսի հատվածներ կային. մենք կարժեզրկենք տվյալ երկրի բոլոր հեղինակավոր եւ արժեքավոր մարդկանց, նրանց ծիծաղելի կդարձնենք, հասարակության վերին շերտեր կբարձրացնենք ոչնչություններին՝ այդպես տվյալ հասարակությունն ու պետությունը դեգրադացվելով՝ կփլուզվեն: Նայելով մեր քաղաքական դաշտում կատարվողին եւ մամուլում ու հեռուստատեսությամբ դրանց արտացոլանքին՝ կարելի է հանգիստ մտածել, որ Ալեն Դալեսի խորհուրդները հենց ինքներս էլ իրականացնում ենք:

Երեկ, իհարկե, «Հայելի» ակումբ եկած լրագրողներից ոչ ոք չէր կասկածում, թե այստեղ հրավիրված Վազգեն Մանուկյանը հենց պատասխանելու է շաբաթ օրը «Հայկական ժամանակ» օրաթերթում տպագրված նրան վարկաբեկող հրապարակմանը: Այդպես էլ եղավ. «Այդ հոդվածի ոճը գերազանցում է նույնիսկ 37 թվականի հոդվածները, երբ գրում էին ժողովրդի թշնամիների մասին, ամեն մեկին մի պիտակ կպցնում էին: Սարսափելի է, որ Հայաստանում այժմ այդպիսի հոդվածներ են տպվում», ասաց նա՝ ժխտելով, որ թերթում վկայակոչված փաստաթուղթը իր ձեռագիրն է. «Կդիմենք փորձաքննության, փորձաքննությունը ցույց կտա, որ դա իմ ձեռագիրը չէ, ես կպրծնեմ, բայց հասարակության մեջ թույնը մնալու է, այդ թույնի միջոցով կառուցված ընտրությունները չեն կարող լավ արդյունք բերել»: Մի խոսքով՝ Վ. Մանուկյանը դիմելու է դատախազություն, հրապարակված ձեռագրերն էլ փորձաքննության են ենթարկվելու, իսկ ահա դրանք լույս աշխարհ բերած թիմը եթե իշխանության գա՝ նույն մեթոդներով էլ շարունակելու է ղեկավարել: Վ. Մանուկյանը հիշեցրեց, որ նույն թիմը (հոդվածը հրապարակողների) նույն թույնը ծորացնում էր 1996 թվականին՝ նախագահի ընդդիմադիր թեկնածու Վազգեն Մանուկյանի դեմ թերթերով եւ հեռուստատեսությամբ, նրանց ձեռքում էր ամբողջ փողը, ՆԳՆ-ն, տեղական իշխանությունն ու կրիմինալ աշխարհը, եւ նրանք պարտվեցին: Հիմա նույն հնարքներն են կիրառվում, ինչը, սակայն, կարող է ընդդիմադիր դաշտի ձայների մի մասը բերել իշխանություններին, այդ պատճառով ԱԺՄ նախագահը կոչ է անում Տեր-Պետրոսյանի թիմին չգնալ թույնի ճանապարհով: Մանուկյանը հիշեցրեց, որ հրապարակված ձեռագիրը (այն կեղծիք անվանեց) ժամանակին տպել է Վանո Սիրադեղյանը «02»-ում, «Հայկական ժամանակի» թղթակիցն էլ հիշեց, որ 2001-ին էլ է այն տպագրվել մամուլում (կարծեմ՝ «Առավոտում»)՝ ինչո՞ւ այն ժամանակ այդպիսի սուր հակադարձություն չի առաջացրել Վ. Մանուկյանի մոտ: Ըստ Մանուկյանի՝ այն ժամանակ ոչ ոք լուրջ չի ընդունել, մի լավ ծիծաղել են, բայց հիմա դա արվում է որպես «սեւ փիար»՝ նախագահի թեկնածուի դեմ, եւ դա արդեն իր պատասխանը կունենա:

Մինչ այդ Մանուկյանն ասել էր, որ նախագահական ընտրություններից առաջ երկու գործոն ազդեցություն ունի գործընթացների վրա՝

տարբեր տեսակի դժգոհություններն ու վախերը: «Բայց ժողովրդի դժգոհությունն օգտագործելով չի կարելի հեղափոխություն անել», համոզված է Մանուկյանը: «Մարդիկ պետք է տեսնեն, որ այդ փոփոխությունը, որին իրենք գնում են, իրենց տալիս է մի նոր բան»: Ըստ նրա՝ մարդիկ նայելու են, թե ընդդիմությունից ո՞վ է հաղթողի տպավորություն թողնում եւ ձայները մեծ արագությամբ սկսելու են նրան տալ՝ նույնիսկ եթե թեկնածուները չեն միավորվում, նրանցից մեկը վերցնում է ընդդիմադիր ձայների գերակշիռ մեծամասնությունը, իշխանությունները երբեմն իրենք են բրթում որեւէ ուժի առաջ՝ ասելով, թե սա է հաղթողը, մյուսներին ջարդելով եւ այդ մեկին իրենց մրցակից ընտրելով. այդ ջարդն ու թույնն այսօր են տեղի ունենում, ըստ նրա: Բացի այդ. «Եթե դժգոհում ես ընտրություն կեղծելուց, պետք է կարողանաս արդյունքի բերել, որ դու կարող ես արդար ընտրություններ անցկացնել, եթե խոսում ես կոռուպցիայից, դու պիտի կոռուպցիայի մեջ չլինես, թե չէ ժողովուրդը քեզ չի վստահի»: Բնակչության 10 տոկոսը վրիժառությամբ է լցված, բայց ընտրությունները չեն կարող վրիժառության վրա կառուցված լինել, այլ՝ թիմի, ծրագրերի, վերջին դեպքում միայն երկիրը փոխելու շարժում կսկսվի: Մանուկյանը դեռ այդ թիմը չի տեսնում: Այնուամենայնիվ՝ այդպիսի թիմի ձեւավորումը նա չբացառեց: Երբ «Ազգը» հիշեցրեց, որ դեկտեմբերի 20-ից հունվարի 15-ը այդ իմաստով կորսված ժամանակ է, Մանուկյանը հակադարձեց, թե 1996-ին ինքը միասնական թեկնածու դարձավ ընտրություններից 15-20 օր առաջ:

Մի խոսքով՝ 2008-ի ընտրությունները վիճակը ռեալ փոխելու հնարավորություն են, քանի որ ոչ թե նույն նախագահի երկու ժամկետների արանքում են, այլ դրանց վերջում, այդ հնարավորության չօգտագործումը ոչ թե միայն իշխանության, այլ ընդդիմության մեղքը կլինի, բացի այդ, կա կրթված, հարվածները տեսած մի սերունդ, որը իրականում ծանոթ է ժողովրդավարական արժեքներին մոտիկից եւ օգտվելու է այդ հնարավորությունից: Մինչդեռ ընդդիմության թեկնածուների մեծ մասի հանդեպ ընդդիմադիր որոշ թերթերի հակաքարոզչությունը կարող է ծանր հետեւանքների բերել՝ հասարակությունը կարող է հիասթափվել, նստել տանը եւ չգնալ ընտրությունների:

Իսկ ինչո՞ւ է Վ. Մանուկյանը քննադատության թիրախ դարձրել Տեր-Պետրոսյանին: Վ. Մանուկյանը նկատեց, որ դա այն պահից է, երբ վերջինս շանտաժի էր ենթարկում՝ թե ով մեզ չմիանա, նա մեզ թշնամի է: 60-ական թվականներից իր կուրսը տանող Մանուկյանը թույլ չի տա, որ ժողովրդին մոլորեցնեն. «Իմ նպատակը չէ՝ ընդդիմությունից մեկնումեկին խփել, բայց եթե կպնում են իմ սկզբունքներին, որոնք ես առաջ եմ տանում, ես միշտ կպատասխանեմ դրան», նկատեց նա՝ հիշեցնելով, որ վերջին տարիներին ինքն անընդհատ քննադատել է իշխանություններին, ցույցերի ժամանակ ջրվել, հարվածներ ընդունել եւ ճնշումների ենթարկվել իշխանությունների կողմից. սա՝ որպես պատասխան, թե իշխանություններին չի քննադատում, այլ՝ միայն Տեր-Պետրոսյանին: Իսկ որ, իբր, Տեր-Պետրոսյանը նրան չի քննադատում՝ պատասխանն այսպիսին էր. «Անձամբ ինքը՝ գուցեեւ ոչ, սակայն թիմի մեջ բաժանում եղել է՝ նայեք, թե ինչ է ասում Ալիկ Արզումանյանն իր ելույթում, այս (ՀԺ-ի) հրապարակումը»:

«Ազգի» մեկ հարցը վերաբերում էր Հայաստանի նախագահական ընտրությունների գործընթացի վրա արտաքին գործոնի ազդեցությանը: Ըստ նրա՝ այդպիսի ազդեցություն բուն ընտրությունների գործընթացի վրա չի լինում, այն առավել տեսանելի է դառնում ընտրություններից հետո՝ հիշեցրեց այլ երկրների հետընտրական ցույցերը. «2007 թվականի ընտրություններից հետո գնահատական հնչեց՝ իբր «լոխ լավ ա», այդ գնահատականներն են ազդում... Ինչ վերաբերում է ֆինանսներով ազդելուն՝ ապա չեմ տեսել, որ ընդդիմության կողմից մեծ ֆինանսներ ծախսվեն, հակառակը՝ իշխանության ֆինանսներն են անսպառ», նկատեց նա:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արեւիկ Պետրոսյանն ամփոփեց արգենտինյան այցը

Արգենտինայի նորընտիր կին նախագահին շնորհավորելու եւ Հայաստանի իշխանությունների երախտագիտությունը փոխանցելու համար դեկտեմբերի 8-10 Արգենտինա մեկնած Ազգային ժողովի փոխնախագահ Արեւիկ Պետրոսյանը երեկ ամփոփել է իր արգենտինյան այցը: Արգենտինայի նախագահին երկկողմ հարաբերությունները խորացնելու Հայաստանի պատրաստակամությունը փոխանցելուց բացի Արեւիկ Պետրոսյանը երախտագիտություն է հայտնել արգենտինացիներին՝ 2006-ին Հայոց ցեղասպանությունն ընդունելու համար: Աժ փոխնախագահը հանդիպել է նաեւ տեղի հայ համայնքին:

Տիկին Կիրշներին նախագահական աթոռին տեսնելը չի ոգեւորել Արեւիկ Պետրոսյանին. նախագահ դառնալու մասին հարցին նա պատասխանել է, որ նման մտադրություն չունի:

Գ. Գ.

ՕՐՍԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 12.00-ին «Ուրբաթ» ակումբը կհյուրընկալի սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանին եւ վարորդների իրավունքների պաշտպանության «Միլլես» կազմակերպության ղեկավար Էդուարդ Հովհաննիսյանին:

◆Նույն ժամին արդարադատության նախարարությունում տեղի կունենա փոխնախարար Գետրգ Կոստանյանի մամուլի ասուլիսը:

◆Ժամը 12.00-ին Ազգային ժողովի նիստերի դահլիճում կմեկնարկեն հայ-թուրքական հարաբերություններին նվիրված լսումները:

◆Ժամը 12.00-ին Մամուլի ազգային ակումբում մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը կամփոփի անցնող տարին:

◆Նույն ժամին «Փաստարկ» ակումբում տեղի կունենա ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանի մամուլի ասուլիսը:

◆Մեկ ժամ անց կառավարության նիստերի դահլիճում տեղի կունենա Հայաստանի առաջադիմական կուսակցության 9-րդ՝ արտահերթ համագումարը:

◆Ժամը 13.00-ին ԱՄՆ-ի դեսպանատանը տեղի կունենա հյուրընկալ Ռոբին Բյոսեի մամուլի ասուլիսը:

◆Նույն ժամին «Հայաքի» մամուլի ակումբի հյուրն է Ստեփան Դեմիրճյանը: Թեման՝ ներքաղաքական զարգացումներ:

◆Ժամը 13.30-ին Բելգիայի տնտեսական առաքելության Հայաստան կատարած այցի շրջանակներում Զարգացման հայկական գործակալությունում տեղի կունենա ֆորում:

◆Ժամը 14.00-ին Ազգային գրադարանի դահլիճում միջոցառում՝ նվիրված «Մարաթուկ» համույթի 25-ամյակին:

◆Ժամը 14.30-ին «Մարիոթ» հյուրանոցի «Սաթենիկ թագուհի» սրահում տեղի կունենա հանրահայտ դաշնակահար Բորիս Բերեզովսկու մամուլի ասուլիսը:

◆Ժամը 16.00-ին՝ հանրահավաք Գյումրիում՝ ի պաշտպանություն ԳԱԼԱ-ի:

◆Ժամը 17.00-ին Եղիշե Չարենցի տուն-թանգարանում տեղի կունենա «Ճանապարհ» երգի DVD-ի շնորհանդեսը: Բառերի հեղինակն է Չարենցի թոռնուհին՝ Հասմիկ Չարենցը, երաժշտության հեղինակ՝ Երանոսյան, երգիչ՝ Հայկ Կասպարով:

◆Ժամը 19.00-ին Նարեկացի արվեստի միությունում կցուցադրվի Նկարչուհի, ռեժիսոր Զառա Մանուչարյանի «Ճանապարհ դեպի Բոթիսաթվա» ֆիլմը:

Հայաստանյան աշխատաշուկայի միտումներն ու մարտահրավերները

«Կոնգրես» հյուրանոցում երեկ տեղի ունեցած աշխատաշուկայի խնդիրներին նվիրված համաժողովում ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Աղվան Վարդանյանը** նշեց, որ երկրում առկա կյանքի որակի փոփոխությունները պարտադրում են անդադարնալ շուկայական տնտեսության մի կարեւոր բաղադրիչի, ինչը աշխատաշուկայի զարգացման միտումներն են եւ առկա մարտահրավերները: Ըստ նրա, առանց այդ ծրագրերի կարգավորման հնարավոր չէ տնտեսական զարգացումը, բնակչության բարեկեցության փոփոխումը. «Ընդամենը մի քանի տարի առաջ մենք ուղղակի աչքաթող էինք անում այս հարցերը, քանի որ երկիրն այլ հիմնախնդիրներ ուներ: Պետք է կարողանանք կայուն քաղաքականություն իրականացնել գյուղատնտեսության ոլորտում, կարողանանք աշխատանք տանել մեր երկրի համաչափ զարգացման ուղղությամբ: Գործազրկության միջին մակարդակը հանրապետությունում մոտ 7 տոկոս է, բայց կան մարզեր, որտեղ գործազրկության մակարդակը ավելի բարձր է»:

Պարոն Վարդանյանը հավելեց նաեւ, որ վերջին տարիների տնտեսական վերափոխման արդյունքում աշխատուժի զգալի մասը հսկայական խնդիրներ ունեցավ՝ բերելով աշխատաշուկայի առաջարկի եւ պահանջարկի անհամապատասխանությանը:

«Կառավարության նոր ծրագրում զբաղվածության աշխատաշուկային նվիրված խնդիրները հստակեցված են, եւ մենք, իբրեւ պետական լիազոր մարմին, մտածում ենք ազգային զբաղվածության հարցերի մշակման մասին: Սա մաս է կազմելու աշխատանքի սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման», ասում է Աղվան Վարդանյանը:

Ըստ համաշխարհային բանկի հաշվետվության, Հայաստանում գործազրկության մակարդակն առանձնակի բարձր է երիտասարդների՝ 15-24 տարեկանների խմբում, հատկապես այդ խմբի կանանց շրջանում: Բարձրագույն կրթություն ունեցող 15 տարեկանից բարձր անձանց շրջանում ավելի բարձր է զբաղվածության մակարդակը՝ 73 տոկոս, քան միջնակարգ եւ նախնական մասնագիտական կրթություն ունեցողների՝ 59 տոկոս եւ ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների շրջանում՝ 63 տոկոս: Հայաստանում գործազրկության տեղողությունը դեռեւս չափազանց մեծ է՝ գործազուրկների երկու երրորդը աշխատանք է փնտրում մեկ տարուց ավելի:

Համաժողովին ներկա **Արվո Կուտդոն**, որը Հայաստանի աշխատաշուկայի մասին Համաշխարհային բանկի հաշվետվության մշակման աշխատախմբի ղեկավարն է, տեղեկացրեց, որ Հայաստանում բժշկական եւ մանկավարժական կրթություն ունեցողների գործազրկությունը շատ է: Նրանց զգալի մասն էլ աշխատում է առանց գրավոր պայմանների: Իսկ 2006-ին աշխատանք փնտրողների ավելի քան 70 տոկոսը գործազուրկի կարգավիճակում էր եղել ավելի քան 12 ամիս, եւ գործազրկության միջին տեւողությունը կազմել է 14.6 ամիս, որը վկայում է լճացած գործազրկության մասին:

Բարձր է նաեւ արտագաղթի եւ տրանսֆերտների մակարդակը: 1989-2001-ին Հայաստանից արտագաղթել է մոտ 600000 մարդ: Ըստ գնահատականների, 2002-05-ին Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության մոտ 9.2 տոկոսն արտագաղթել է աշխատանք փնտրելու նպատակով: Հայաստանն ունենալով մեծ սփյուռք՝ բնակչությունն ստանում է մեծ ծավալի տրանսֆերտներ: Տրանսֆերտների ծավալը 2003-ին պաշտոնապես գնահատվել է 289 միլիոն դոլար, սակայն ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության փորձագետների գնահատմամբ՝ տարեկան տրանսֆերտների ծավալը հասնում է մոտ 900 միլիոն ԱՄՆ դոլարի: Տրանսֆերտների մասնաբաժինը ՀՆԱ-ում գնահատվում է մինչեւ 30 տոկոս՝ պաշտոնական տվյալից երեք անգամ ավելի:

ՆԱԲԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ռուսական մատնոց

Նոնսամարե լեռներ

Պատմությունը հայտի եւ անհայտ

Ռուսաստանի եւ Հայաստանի ճակատագրերն անխզելիորեն կապված են պատմության հարյուրամյակներով: Երկու երկրների մշակութային եւ առեւտրական կապերին առնչվող առաջին տեղեկությունները վերաբերում են 10-11-րդ դարերին: «Փոքր եւ Մեծ Հայքերի» մասին հիշատակում կա ռուսական տարեգրության ամենանշանավոր ժողովածուի՝ մոտ 1113-ին ստեղծված «Անցած տարիների պատմության» մեջ: Վանական տարեգիր Նեստորը իր ժամանակի առավել նշանակալի երկրների ցանկում Հայաստանը նեռառել է Պարսկաստանի, Հնդկաստանի, Բրիտանիայի եւ մյուսների հետ մեկտեղ: Չնայած 17-րդ դարում Թուրքիան եւ Իրանը կիսեցին Հայաստանի տարածը, ռուս-հայկական կապերը չխզվեցին եւ շարունակում էին ամրապնդվել: Ռուսաստանը հայերի ազատագրության հույսը դարձավ: 19-րդ դարում Ռուսական կայսրության ձեռնարկած ռազմարշավի շնորհիվ Արեւելահայաստանը եւ Արեւմտահայաստանի մի մասը մտան նրա կազմի մեջ: Այդ իրադարձությունը կանխեց հայերի՝ որպես ազգի բնաջնջումը, թույլ տվեց պահպանել ազգային ամբողջականությունը, լեզուն եւ մշակույթը: Ռուսական կայսրության անկումից եւ խորհրդային պետության կազմավորումից հետո Հայաստանը մտավ ԽՍՀՄ կազմի մեջ: 20-րդ դարում Ռուսաստանի եւ Հայաստանի ժողովուրդներն էլ ավելի մերձեցան իրար:

Խորհրդային ժամանակաշրջանի հայ գրողների ու բանաստեղծների ստեղծագործությանը ռուսաստանցի ընթերցողները լավ ծանոթ են ռուսերեն բազմաթիվ հրատարակություններից: Խորհրդային Միության փլուզումից եւ Հայաստանի անկախության հռչակումից հետո մշակութային կապերը մեծ չափով կորսվեցին, թարգմանչական համագործակցությունը նույնպես թուլացավ. ի դեպ, դա վերաբերում է նաեւ մյուս նախկին խորհրդային հանրապետություններին:

Ներկայումս Ռուսաստանի եւ Հայաստանի կառավարությունների ու հասարակական կազմակերպությունների ջանքերն ուղղված են երկու պետությունների մերձեցմանը: Քայլերից մեկը դարձավ 2005 թվականը Հայաստանում Ռուսաստանի տարի եւ 2006-ը Ռուսաստանում Հայաստանի տարի հայտարարելը:

Իր գործունեությունը վերականգնեց Հայաստանի հետ բարեկամության ու համագործակցության ռուսաստանյան ընկերությունը: Դրա նախագահ Վիկտոր Վլադիմիրովիչ Կրիվոդուսկովի գործուն ղեկավարությամբ սկսվեց Հայաստանի պատմությանն ու գրականությանը նվիրված մատենաշարերի հրատարակությունը:

«Հայաստան, Հայաստան... 200 հարց ու պատասխան երկրի ու ժողովրդի մասին բիբլիական ժամանակներից մինչեւ մեր օրերը» գիրքը Հայաստանի պատմության լավ ուսուցույց կդառնա ընթերցողների լայն շրջանակի համար: Հակիրճ եւ տպավորիչ ձեւով շարադրված են տեղեկություններ երկրի պատմության, աշխարհագրության, տնտեսության եւ մշակույթի վերաբերյալ:

Կիլիկիայի ռոնումներում

Գրող եւ «Լիտերատուրնայա գազետայի» երկարամյա սեփական թղթակից Զորի Բալայանը խորհրդային լրագրության լեգենդ է, անխոնջ ճանապարհորդը, «Կիլիկիա» առագաստանավի ստեղծման ոգեշնչողը, նավ, որով նա համախոհների խմբի հետ անցավ «7 ծովերով»: Զորի Բալայանի առագաստանավը ինքնաբեռն փայտե նավ է, որը նման է միջնադարյան Հայաստանում պատրաստված նավերին:

Կիլիկիան հին Հայաստանի անվանումներից մեկն է: Զորի Բալայանի եւ նրա թիմի առագաստանավը բուն Հայաստանի պես գրեթե իր բոլոր կեսի չափով բեռնված էր գրքերով, Զորի Բալայանի գործերով, հանրագիտարաններով եւ հենց Կիլիկիային նվիրված մենագրություններով, որոնք նա նվեր էր տանում շատ երկրների ծովային նավահանգիստներում գտնվող հայրենակիցներին:

Բալայանի «Վերադարձ» գիրքը նվիրված է Եվրոպայի շուրջը կատարված նավագնացության եզրափակիչ փուլին: Ճանապարհորդների ծովային, օվկիանոսային եւ գետային ուղիներն առաջացուցեցին, որ հենց այդպես են նավարկել հին ժամանակներում, երբ աշխարհագրական քարտեզներն այլի չէին ընկնում ճշգրտությամբ եւ նոր-նոր էին սկսել վերստեղծել երկրի մակերեսույթի իրական պատկերը: Տարբեր պետությունների նավահանգիստներում կատարված վեց տասնյակ կառանումներ, հանդիպումներ սփյուռքահայության, արտասահմանցի բարեկամների հետ եւ վերջին նավարկություններ հին աշխարհի ծովերում:

«Մի ծով, Բոսֆոր... Միջերկրական ծովն իր տարբերակման ծովերով, Ջիբրալթար, Ատլանտյան օվկիանոս, Լա Մանշ, Պա դը Կալե, Հյուսիսային ծով, Քիլի ջրանցք, Բալթիկ ծով, Նեւա, Լադոգա, Օնեգա եւ Բելոյե լճեր, Վոլգա-Բալթյան ջրուղի, Վոլգա, Վոլգա-Դոն ջրանցք, Դոն, Ազովի ծով, Կերչի նեղուց, Սեւ ծով: Եվ այստեղ շրջանը փակվեց: Մենք մեզ թույլ էինք տալիս կատակել եւ հեգնել, Եվրոպան անվանելով արդեն ոչ թե ինչ-որ թերակղզի, այլ ամենաիսկական կղզի», գրում է Զորի Բալայանն իր անբեւեռակալելի երթուղու վերաբերյալ:

Իսկ «Վերադարձ» գիրքը նաեւ պատմություն է հեղինակի ընկերների եւ ուղեկիցների հետաքրքրական ճակատագրերի մասին:

Հայաստանի արձակը եւս պոեզիա է

«Կանչը» առաջին գիրքն է այն շարքի, որը մեզ ծանոթացնում է հայ գրողների ժամանակակից արձակին: Հայաստանի անկախացումից ի վեր նման հրատարակություններ փաստորեն չէին եղել: Պատմվածքների հիմնական թեման Հայաստանի ողբերգական իրադարձություններն են, Սումգայիթի դեպքերը, Լեռնային Ղարաբաղի պատերազմը, երկրի շրջափակման հետեւանքները: Ժամանակակից հայկական արձակի հատկանշական գծերն են իրականության դրամատիկ պատկերումը, հերոսների հոգեբանության խոր վերլուծությունը, կյանքի բոլոր փորձությունների դաժանությանը հակառակ բարու վերջնական հաղթանակի հաստատումը: Աչքեցնում է Զորի Բալայանի «Հայդուկը եւ աղջնակը» պատմվածք-եղելությունը, որի հերոսը չի կարողանում սպանել ադրբեջանցի աղջնակին, չնայած սեփական դստեր ողբերգական մահից հետո տված վրեժի երդմանը:

Խաղաղ կյանքի վերածնման տենդագին հույսը Դոնարա Ղարագյոզյանի «Ծառերը» պատմվածքի լեյտմոտիվն է: Այն գրված է իսկական վարպետությամբ:

Գրքի մի շարք հեղինակներ ընտրում են պատումի այլաբանական, առակային ձեւեր: Այդպիսին է Հովիկ Վարդումյանի «Շրջան» պատմվածքը: Դրա հերոսն անծայրածիր ջրատարածքում լողում է քարը վզից կախված: Քարը նրան քաշում է դեպի հատակը, նա ամբողջ ուժով ջանում է դրանից ազատվել, բայց չի կարողանում: Նա հասկանում է, որ դա միակ ելքն է, «անսահմանության պես անհասանելի եւ ճախող թռչնի պես հեռավոր հույսը»: Հենց հույսն է նրան նոր ուժեր տալիս:

«Կանչ» պատմվածքների գրքի բնական շարունակությունը դարձավ «Միրսը քար չէ» ժողովածուն, որը միավորեց տասը հայտնի հայ գրողների վիպակներ: Լրագրում են ժամանակակից իրադարձություններ: Բազմաբնույթ է ժանրերի ընտրությունը՝ իրատեսական պատումից մինչեւ ֆանտաստիկ այլաբանություններ: Բայց հեղինակներն արտասովոր հստակությամբ ու պայծառությամբ բացահայտում են այսօրվա Հայաստանի հիմնահարցերի տարբեր կողմերը: Հայ հեղինակների եւ նրանց վիպակների հերոսների աշխարհընկալման եզակի առանձնահատկությունն է ժողովրդի հին պատմության մշտական «ներկայությունը», որը խորություն է հաղորդում իրադարձություններին եւ խառնվածքներին:

Վահան Տեր-Ղազարյանի «Արխայական մեսաղադամ» վիպակն առակ-լեգենդ է թուրքական տիրապետության ժամանակների մասին: Գլխավոր հերոսը պատանի հասակում վերադրել է հայրենի գյուղի կործանումը եւ հարազատների մահը: Հայոց արխայի դիմադրակերով հնօրյա մեսաղադամը նրա մեջ վերածնում է սեփական ժողովրդի համար հպարտության զգացումը եւ զավթիչներին դիմադրելու ձգտումը: Այդ զգացումները նա փոխանցում է իր որդուն: Սակայն նման մարդիկ գյուղում շատ չեն՝ ինքը եւ մեկ ուրիշ գաղթական իր չորս որդիներով: Գյուղը պատերազմողներ չկան, եւ թուրքերը կրկին ավերում են այն: Սեփական ժողովրդի ճակատագրի համար յուրաքանչյուրի պատասխանատվության, անվեհերության, սեփական երկրի հանդեպ սիրո ու հպարտության դաստիարակման վերաբերյալ հեղինակի խոհերն արձագանգում են Հովիկ Վարդումյանի «Այդպես են մեռնում արծիվները» վիպակին: 1994 թվական, Լեռնային Ղարաբաղ, հրամանատարությունն աշխարհազորայինների դասակ է ուղարկում գյուղը գրոհելու: Դասակի կործանումն անխուսափելի է, բայց գրոհն անհրաժեշտ է՝ այսպիսին են պատերազմի օրենքները: Վիպակի հերոսները տարբեր զբաղմունքների եւ տարիքի մարդիկ են: Նրանց միավորել է ընդհանուր չարիքը՝ պատերազմը: Աչքեցուցիչ են այդ մարդկանց արիությունը, մահվան դեմ-հանդիման նրանց անվեհերությունը: Դասակը զոհվում է, բայց անելանելիության զգացում չկա: Քանի դեռ կան նման մարդիկ, ժողովուրդը կապրի:

Դավիթ Սուտադյանի «Հրաժեշտը» հայ մտավորականների ընտանիքի ողբերգական պատմությունն է 20-րդ դարում: Ցեղասպանության ժամանակ զոհվում է գլխավոր հերոսի պապը, եղբայրներից մեկը հայտնվում է օտար երկրում, մյուսը հետագայում ձերբակալվում է՝ «արտասահմանում ազգականներ ունենալու համար»: Գլխավոր հերոսի սիրած աղջիկը, ինչպես պարզվում է, այն մարդու դուստրն է, որը մեղավոր է հերոսի հոր ձերբակալման մեջ: Եվ դա բաժանման պատճառ է դառնում: Այդ դեպքերի շղթան ընտանիքը հասցնում է գրեթե միակատար ոչնչացման: Ժառանգներից միայն մեկն է հասնում 21-րդ դար, որ վերածնության հույս է, քանզի «չկա երեկվա օր, անցյալը վերածվել է ներկայի, եւ ժամանակ կոչվածը ոչ թե անհետանում է, այլ շարունակում է ապրել մարդկանց մեջ, անցնելով հայրերից որդիներին եւ նրանց հաջորդողներին»:

Պերճ Զեյթունցյանի «Հայելուն մի նայիր» վիպակը մեզ տեղափոխում է 21-րդ դարի Հայաստան: Գրոտեսկի ձեւով, հումորով նկարագրված է ժամանակակից կյանքը: Մարդու համար դյուրին չէ շուկայական նոր իրողություններին ընտելանալը, շուրջը կատարվող երեւույթներն իմաստավորելը:

«Խստաշունչ ճաքության երկիր...»

Հայաստանի պոեզիային Ռուսաստանում լայնորեն ծանոթացան 20-րդ դարի սկզբին Վալերի Բրյուսովի «Հայաստանի պոեզիան» ծաղկաքաղի լույսընծայումից հետո: Հայկական պոեզիայի երկհատորյակի հրատարակումը բրյուսովյան գլուխգործոցի յուրօրինակ շարունակությունն է: Առաջին հատորը՝ «Նոնսամարե համրիչը», արդեն լույս է տեսել: Այդ ժողովածուն կհետաքրքրի ոչ միայն ավագ սերնդին, այլեւ հատկապես երիտասարդ ընթերցողներին, որոնք իրենց համար առաջին անգամ կբացահայտեն հայ բանաստեղծների հրաշալի գործերը: Ժողովածուի մեջ ներկայացված են 20-րդ դարի հայտնի հեղինակներ Եղիշե Չարենցը, Մարո Մարգարյանը (որոնց բանաստեղծությունները թարգմանել են Աննա Ախմատովան, Պավել Անոկոլսկին, Արսենի Տարկովսկին), Սիլվա Կապուտիկյանը, Ալլա Տեր-Հակոբյանը, Գետոգ Էմինը, Գլան Օնանյանը, Ավետիք Իսահակյանը, ինչպես նաեւ բանաստեղծներ Արտեմ Հարությունյանը, Գրիգոր Գասպարյանը, Վահագն Դավթյանը եւ ուրիշներ: Իսկ Նինա Գաբրիելյանը գրում ներկայանում է թե՛ որպես յուրահատուկ հեղինակ եւ թե՛ որպես հայերենից ռուսերենի թարգմանչուհի: Հայ պոետների բանաստեղծություններում զուգորդվում են վառ կերպարայնությունն ու մտքի հղկվածությունը, դրանցում արտացոլվում է դարերի իմաստությունը:

Ռուսովների տունը հաղթահարում է պատնեշները

Ռուսաստանի գրական կյանքում նկատելի երեւույթ դարձավ «Դոմ Ռուսովիխ» գրական հանդեսի 3-րդ համարի լույսընծայումը, որը նվիրված է միաժամանակ Հայաստանում ռուսաց լեզվի տարվան եւ ռուսական խոսքի օրերին:

Հանդեսի թեմատիկ թողարկման հրատարակիչներն են Հայաստանի հետ բարեկամության ու համագործակցության ռուսական ընկերությունը, Գրողական միությունների միջազգային ընկերակցությունը, Ռուսաստանի գրողների միությունը, Հայաստանի գրողների միությունը, Ռուսաստանի լրագրողների միությունը: Հանդեսում առաջ է քաշված կարեւոր եւ հույժ անհրաժեշտ խնդիր. «օժանդակել ժողովուրդների ու երկրների միջեւ տեղեկատվական հոսքերի եւ մշակութային (առաջին հերթին գրական) կապերի վերահաստատմանը»:

Հանդեսի «Եվրասիայի գրական կյանքը. Ռուսաստան-Հայաստան» խորագրի ներքո լայնորեն ներկայացված է Հայաստանի բանաստեղծների, գրողների, գրականագետների, փիլիսոփաների եւ հրապարակախոսների, ինչպես նաեւ հայ գրականության հայտնի թարգմանիչների ստեղծագործությունը: Ցավոտ եւ արձակ, ինքնատություն եւ հրապարակախոսություն, արդի եվրասիականությանը վերաբերող սուր ինքարկումներ՝ ընթերցողն այս ամենը կգտնի «Դոմ Ռուսովիխի» վերջին համարում:

Երեկվա ողբերգական ճշմարտությունը

«Խոովահոգ Ղարաբաղ» գրքում դարաբաղյան իրադարձությունների անմիջական մասնակից Վիկտոր Վլադիմիրովիչ Կրիվոդուսկովի հուշերն են, որը 1990-1991-ին Լեռնային Ղարաբաղում ԽՍՀՄ ՆԳՆ օպերատիվ-ինչական խմբի շտաբի պետն էր: Դա ոչ թե ականատեսի կամ դիտորդի, այլ ողբերգական դեպքերի անմիջական մասնակցի վկայությունն է: Ընթերցողին հնարավորություն է տվող կարդալու Լեռնային Ղարաբաղի դեպքերին առնչվող մեր դեռեւս ընդհանուր պատմության ինչ հայտնի էջերը: Այդ դեպքերը սակավ են լուսաբանվել խորհրդային Միության պատասխանատու իշխանությունների կողմից, եւ Վիկտոր Կրիվոդուսկովի հուշերի գիրքը ճշմարտացի վկայությունն է այն գաղտնիքների, որոնք մշտապես դառնում են հայտնի:

«Այն ժամանակներից անցել է տասը տարուց ավելի: Առավել հաճախակի ու համառորեն սկսել է հայտնվել դարաբաղյան գրառումները վերծանելու միտքը, որպեսզի հիշողությունից չջնջվեն իրադարձությունները, փաստերը, մարդկանց անունները, դժվարին տարիներին նրանց հանդես բերած զարմանալի արիությունը, համբերությունն ու վեհանձնությունը: Իմ խորին համոզմամբ, այդ ժամանակներն արժանի են մնալու պատմական հիշողության մեջ», գրքի ստեղծման շարժառիթների կապակցությամբ ասում է հեղինակը:

Վիկտոր Կրիվոդուսկովի կարծիքով, գիրքը կարող է օգնել «պարզելու եւ հասկանալու, թե ինչ պետք է արվի նմանօրինակ ժողովրդական ողբերգությունների կրկնություն թույլ չտալու, ահաբեկչության բոլոր դրսեւորումները կանխելու համար, որպեսզի առաջացող խաղաղասիրությունն մուտք չգործեն այնպիսի մարդիկ, որոնք հանուն անձնական հավակնությունների կդավաճանեին սեփական ժողովուրդներին, նրանց կոչերին փոխադարձ ոչնչացման»:

Անցյալի խոր վերլուծությունը նախկին խորհրդային տարածքում թույլ է տվել դառնալ պատմականորեն կապված մեր ժողովուրդների դարավոր բարեկամության շարունակման նվիրյալներից մեկը:

«ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԵՏԻ»
12.12.07 թ.
Խարազանեց Պ. Ք.

Թուրքիան որպես եվրասիական տերություն

Ռուսաստանցի մուսուլմանները բավականին արդյունավետ լոբբիստական գործունեություն են ծավալել այս երկրում թուրքամետ տրամադրություններ ստեղծելու ասպարեզում: Երկու երկրների հենց միայն առևտրատնտեսական փոխհարաբերությունները միլիարդների են հասնում եւ զարգանում են դինամիկորեն: Մոսկվայում, օրինակ, թուրքերն ստեղծել են «Ռամստոր» կոչվող գերժամանակակից առևտրացանց, որի մեջ մտնում են խաղաղով ու մարզով մեկ փռված բազմաթիվ առևտրակետներ՝ սուպերմարկետներ:

Բիզնեսը՝ բիզնես: Սակայն բուն թուրքերը այստեղ նույնքան արդյունավետ աշխատանք են տանում նաեւ համաշխարհային գործերում իրենց երկրի պատմական ու ժամանակակից դերի խարզչության բնագավառում: Խորհրդային Միության խայխայումից հետո Թուրքիային հաջողվեց կայուն դիրքեր գրավել ոչ միայն նորակազմ մուսուլմանական պետություններում, այլեւ Ռուսաստանի մուսուլմանաբնակ տարածաշրջաններում՝ Հյուսիսային Կովկաս, Թաթարիա, Բաշկորտոստան եւ այլն: Ահա եւ ռուսաստանյան մամուլում հաճախ են նյութեր հրապարակվում «եվրասիական» թեմաներով, որոնցում այն միտքն է ներշնչվում, որ ոչ միայն Ռուսաստանն է իր բնակչությամբ, մշակույթով, կրոնով եվրոպական-ասիական, այլեւ... Թուրքիան:

Օբյեկտիվորեն, անշուշտ, Եվրոպան ու Ասիան չեն կարող գոյություն ունենալ իրարից անկախ: Սակայն պարզվում է, որ երկու աշխարհամասերի հարաբերություններում մեծ դեր կարող է խաղալ հենց Թուրքիան: Եվ, իհարկե, շեշտվում է այդ երկրի լիդերությունը առհասարակ թյուրքալեզու աշխարհում: Ահա թե ինչ է խարազում Թուրքիայի արտաքին առեւտրի նախարարն այդ կապակցությամբ.

«Նրանք, ովքեր ուշադրություն են դարձնում եվրասիական ընկալման մեջ Թուրքիայի կենտրոնական դերակատարմանը, դրա համար ունեն ծանրակշիռ հիմքեր: Թուրքիան լուրջ ուժ է դառնում ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ողջ աշխարհում. նրա ՆՀԱ-ն մշտապես աճում է, արտաքին առեւտուրն ընդլայնվում է, մենք ունենք սղաձի ցածր մակարդակ եւ կայուն մակրոտնտեսական ցուցանիշներ: Եվրասիական աշխարհագրությունն ընդգրկում է 23 մլն քառ. կիլոմետրանոց տարածաշրջան 350 միլիոն բնակչությամբ, եւ ներկայումս մենք վերածվում ենք 1,2 տրիլիոն դոլար ՆՀԱ, արտաքին առեւտրի 700 մլրդ դոլար ծավալով եւ 10 տոկոս ամենամյա աճով համընդհանուր տնտեսական եւ առեւտրական կենտրոնի»:

Եվ ռուսների բարեհաճությունը շահելու նպատակով հիշյալ հրապարակումներում զուգահեռներ են անցկացվում Օսմանյան եւ Ռուսական կայսրությունների ճակատագրի նմանության, եվրասիական աշխարհամասի վրա երկու երկրների էական ներգործության մասին եւ այլն:

Պատահական չի կարելի համարել, որ թուրք ձեռնարկատերերի ու արդյունաբերողների կոնֆեդերացիայի կողմից վերջերս Ստամբուլում անցկացված «Թուրքիա-Եվրասիա՝ արտաքին առեւտրի կամուրջ» ֆորումում Ռուսաստանի պատվիրակությունը թվականակով ամենամեծն էր ու արժանանում էր Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնատար անձանց անթաքույց ուշադրությանը:

Դա բացատրելի է. թուրքերը Ռուսաստանում շատ ակտիվ են շինարարության, սննդի ու թեթեւ արդյունաբերության ապրանքների, ավտոմեքենաների, կահույքի բիզնեսում: Էլ չենք խոսում տուրիզմի մասին:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Կոնգրեսը լրացուցիչ գումար չհատկացրեց Իրաքի պատերազմին

Կոնգրեսի ստորին պալատը հավանություն է տվել 2008-ին Աֆղանստանի պատերազմին լրացուցիչ 31 մլրդ դոլար հատկացնելու օրինագծին, սակայն հրաժարվել է փող հատկացնել Իրաքի պատերազմին: Դեմոկրատները այդ պատերազմի համար լրացուցիչ միջոցների հատկացումը շաղկապում են Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումն սկսելու հետ:

Ընդհանուր առմամբ, Սպիտակ տունը Իրաքի եւ Աֆղանստանի պատերազմների համար 2008-ի ֆինանսական տարում խնդրել էր 196 մլրդ դոլար:

Միեւնույն ժամանակ ստորին պալատը հաստատել է դաշնային կառավարության ֆինանսավորման 516 մլրդ դոլարանոց օրինագիծը: Վերջինս պետք է ֆինանսական դրվի նաեւ Սենատի նիստում, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Սենատում հանրապետականները առաջարկում են Իրաքի եւ Աֆղանստանի պատերազմները շարունակելու նպատակով 2008-ի ֆինանսական տարում ընդհանուր առմամբ հատկացնել 70 մլրդ դոլար: Նկատի ունենալով, որ Աֆղանստանում հակաահաբեկչական գործողությունների շարունակման համար արդեն հատկացվել է 31 մլրդ, հանրապետականները ձգտում են եւս 40 մլրդ ավելացնել Իրաքի պատերազմի համար: Միայն այդ դեպքում նախագահ Ջորջ Բուշը կարող է ստորագրել կառավարական հիմնարկների ֆինանսավորմանը վերաբերող օրինագիծը:

Ավելի վաղ՝ շաբաթ օրը, իր ավանդական ռադիոելույթում Բուշը հայտարարել էր, թե լրացուցիչ 190 մլրդ դոլար է հարկավոր Իրաքում եւ Աֆղանստանում պատերազմները շարունակելու համար: Օրենսդիրները պարտավոր են տվյալ հարցում պարզություն մտցնել մինչեւ Ծննդյան տոների արձակուրդը:

Ֆիդել Կաստրո. «Ճանապարհ տանք երիտասարդներին»

Կուբայի պետական հեռուստատեսությամբ ընթերցվել է Ֆիդել Կաստրոյի նամակը: Երկրի 81-ամյա առաջնորդը նամակում ասում է, որ իր պարտքն է համարում երիտասարդներին ճանապարհ տալը եւ ոչ թե իշխանությանը կառչելը: Կաստրոն հրապարակային ելույթ չի ունեցել արդեն 16 ամիս՝ այն պահից, երբ ենթարկվեց բարդ վիրահատության: Սակայն հեռուստատեսությամբ մի քանի անգամ ցուցադրվել են լուսանկարներ եւ տեսաերիզներ, որոնցում Կաստրոն բավական առույգ տեսք է ունեցել:

Անցյալ տարի Կաստրոն երկրի ղեկավարությունը ժամանակավորապես հանձնեց իր 76-ամյա եղբորը՝ Ռաուլին, սակայն մինչեւ օրս պաշտոնապես պահպանում է կուսակցական եւ պետական բոլոր պաշտոնները:

Լրատվամիջոցները նշում են, որ Կաստրոյի նամակն առայժմ առաջին նշանն է այն բանի, որ նա չի բացառում պաշտոնաթող լինելու հնարավորությունը: «Իմ գլխավոր պարտքն է չկառչել պաշտոններին եւ մանավանդ չփակել երիտասարդների ճանապարհը», ասվում է 1959-ից երկիրը ղեկավարող Կաստրոյի նամակում:

Կաստրոյի խոսքերով, անհրաժեշտ է «կիսել փորձը եւ գաղափարները»: Նրա հիվանդության ժամանակամիջոցում երկրի պետական լրատվամիջոցները հրապարակել են Կաստրոյին վերագրվող մի շարք հոդվածներ եւ մեկնաբանություններ: Այս կապակցությամբ BBC-ն նշում է, որ ինքը՝ Կաստրոն, մինչեւ օրս չէր անդրադարձել իր հետագա անելիքներին:

Կաստրոյի նամակն ընթերցվել է Կուբայի հեռուստատեսության երեկոյան գլխավոր տեղեկատվական ծրագրի ժամանակ: Նամակը մեծ մասամբ նվիրված է մոլորակի կլիմայական փոփոխությունների հարցերը քննարկող Բալիի կոնֆերանսին, ինչպես նաեւ շնորհավորանք է պարունակում բրազիլացի հայտնի ճարտարապետ Օսկար Նիմեյերի 100-ամյակի առթիվ: Նիմեյերը մասնավորապես Բրազիլիայի նոր, գերարդիական մայրաքաղաք Բրազիլիայի նախագծի հեղինակն է:

Կուբայի առաջնորդի նամակը դժվար է միանշանակ մեկնաբանել որպես պաշտոնաթողության դիմում, քանզի այնտեղ հրաժարականի կոնկրետ ժամկետի ակնարկ անգամ չկա: Սակայն երիտասարդներին ճանապարհ տալու վերաբերյալ Կաստրոյի գրած տողերը կարող են նշանակել, որ նա Ռաուլին իր պարտադիր իրավահաջորդը չի համարում:

Դեկտեմբերի սկզբներին Ֆիդել Կաստրոն առաջադրվեց Ազգային ժողովի պատգամավոր: Սա նշանակում է, որ Կաստրոն չի կորցնում ապագայում իշխանության գլուխ վերադառնալու հույսը: ԱԺ ընտրությունները տեղի կունենան հունվարի 20-ին: ԱԺ անդամներից կազմավորվում է Պետխորհուրդը: Կաստրոն այդ խորհրդի նախագահն է 1960-ականների սկզբից:

ՀԱԼԱՍՄՆԵՔԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Իրաքում ասորիների ցեղասպանության վտանգ

Իրաքի քրիստոնյա ասորիների ղեկավարների տվյալներով, օրեցօր նվազող քրիստոնյա բնակչության հետագա գոյությունը խիստ վտանգված է երկրում շարունակական բռնությունների աճի պատճառով, տեղեկացնում է «Ասորական միջազգային լրատու գործակալության» (ԱՄԼԳ) հաղորդագրությունը, հավելելով, որ այդ առթիվ անգործունեության մեղադրանքներ են հնչել ինչպես կառավարության, այնպես էլ կոալիցիոն ուժերի հասցեին:

Քրիստոնյա համայնքի ուշադրությունը ներկայումս բեւեռված է հիմնականում ասորիների անվտանգության պայմանների վատթարացման վրա: Բաղդադի հարեւանությամբ (մոտ 10 կմ հարավ-արեւմուտք) գտնվող Դորա շրջանում նախքան պատերազմը բնակվում էր 5 հազար քրիստոնյա, որի մեծամասնությունը հեռացել է այդ տարածքից: Անցյալ մայիսի 18-ին տեղի Սբ. Գեւորգ եկեղեցին հրո ճարակ էր դարձել: Նույն եկեղեցին 5 այլ եկեղեցիների հետ ռմբակոծվել էր դրանից առաջ: Մայիսի 20-ին հոգեւոր հայր Հաննան առեւանգվել էր Բաղդադում: Ավելին, Դորայի բնակիչներին սպառնացել էին եւ պահանջել կամ թողնել հեռանալ, կամ ընդունել մահմեդականություն: Հեռացողներին արգելել էին վերցնել իրենց ունեցվածքը:

«Արեւելքի հնագույն եկեղեցու» պատրիարք Մար Ադդայ Բ-ն նշել է, որ միայն այն ընտանիքներին է թույլատրվում մնալ, որոնց դուստրը կամ քույրն ամուսնանում է մահմեդականի հետ:

Հակառակ ամերիկյան եւ իրաքյան կառավարություններին ուղղված բազմաթիվ դիմումների, անվտանգության պայմանների բարելավման ոչ մի քայլ չի արձանագրվել: Ասորի պատրիարքի մեկնաբանությամբ, նրանք ոչ միայն ոչինչ չեն ձեռնարկում այդ ուղղությամբ, այլեւ «հրահրում են բռնությունները մեր դեմ»:

Ըստ ՄԱԿ-ի տվյալների, քրիստոնյա ասորիների կեսից ավելին ընդմիշտ հեռացել է երկրից: Բասրայում նրանք «ամբողջովին անհետացել են», Մոսուլում աղանդավորների եւ ծայրահեղականների հետապնդումներից շատերն ստիպված են եղել փախչել:

Ավերված Սուրբ Գեւորգ եկեղեցին

Մինչ օրս համեմատաբար անվտանգ համարվող հյուսիսային մասում գտնվող Նինվե տափաստանն անգամ այժմ Քրդական ժողովրդական կուսակցության (ՔԺԿ) հարձակումների թիրախ է դարձել: Այնտեղ երբեմն սպանվում են ասորի առաջնորդները: «Եթե մահմեդականները ասորական բնակավայրերի վրա են հարձակվում, ՔԺԿ-ն հարձակվում է ասորիների ինքնության եւ ազգային արժանապատվության վրա», ասել է ասորի առաջնորդներից մեկը: Ամերիկացի ակտիվիստ Ջեքի Բեջանի բնութագրմամբ՝ «Մենք այժմ ականատես ենք լինում 1915-ին օսմանյան թուրքերի եւ (քրդերի) կատարածի երկրորդ փուլին՝ մարդկության դեմ իրագործված ամենասարսափելի հանցագործության՝ ցեղասպանության»:

Թարգմ.՝ Հ. Ծ.

Իրանը կառուցում է երկրորդ ԱԷԿ

Բուշեհրի ատոմակայանի շինարարությունը չավարտած՝ իրանցիներն սկսել են իրենց երկրորդ ԱԷԿ-ի կառուցումը: Այդ մասին Իրանի հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարել է երկրի ատոմային ծրագրի պատասխանատու Դոլամոեզա Աղազադեն:

«Մենք Դարկհովեյնում կառուցում ենք 36 մեգավատտ հզորությամբ սեփական ատոմակայան», ասել է Աղազադեն: Իրանի հարավում գտնվող այդ ԱԷԿ-ի վառելիքը պետք է մատակարարվի Նաթանցի միջուկային հետազոտությունների կենտրոնից, որտեղ ներկայումս գործում է ուրանի հարստացման 3 հազար ցենտրիֆուգ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը մեջբերում է Աղազադեի այն խոսքերը, որ նոր ԱԷԿ-ն աշխատեցնելու համար հարկ կլինի Նաթանցում ցենտրիֆուգների թիվը հասցնել 50 հազարի:

Անգլիայում ոստիկանները սպանել են երկու դերասանների

Անգլիայում ոստիկանական ֆիլմի նկարահանման ժամանակ ոստիկանները գնդակահարել են երկու դերասանների, նրանց ընդունելով իսկական կողոպտիչների տեղ: Ֆիլմի բեմադրիչ Ռադիկալ Ռիբեյրոն Ֆրանսուազեսի թղթակցին պատմել է, որ դերասանների մոտ եղել է չլիցքավորված հրազեն:

Նկարահանումներն անցկացվում էին Անգլիայի մայրաքաղաք Ռուանդայի քրեածին արվարձաններից մեկում: Բեմադրիչի խոսքերով, նկարահանումների համար սպացված էր համապատասխան թույլտվություն:

Ոստիկաններն ավտոմեքենայով մեծ արագությամբ մոտեցել էին նկահարանման հրապարակին եւ դիմահար կրակ բացել: Ռիբեյրոն սկզբում ափոթվել էր, իսկ հետո բացականչել. «Խնդրում եմ, մի՛ կրակեք, սա կինո է»: Դրանից հետո ոստիկանները դադարեցրել էին հրաձգությունը եւ հեռացել դեպքի վայրից, չօգնելով վիրավորներին:

Նկարահանումների ժամանակ հավաքված հետաքրքրասերների ամբոխի մեջ նույնպես տուժածներ կան: Վիրավորներին տարել են հիվանդանոց: Բեմադրիչի խոսքերով, կրակ բացած ոստիկանները, ըստ երեւույթին, հատուկ սպորտաձեւման դիպուկահարներ են:

Անգլիայի ոստիկանությունն առայժմ չի մեկնաբանում միջադեպը:

Պ. Բ.

Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանը 40 տարեկան է

Սարյանի տուն-թանգարանը յուրատեսակ սրբավայր է, ուր մտնելիս առնչվում ես սարյանական կենսատու արվեստի հետ, տանում այն լույսն ու գեղեցկությունը, որ տալիս է Սարյանի արվեստը: Հայ իրականության մեջ բացառիկ երեւույթ է, երբ արվեստագետը կենդանության օրոք դառնում է սեփական թանգարանի բացման ականատեսը: 1967-ն էր, երբ բացվեց Մ. Սարյանի տուն-թանգարանը: Վարպետն էլ դրեց ֆոնդի սկիզբը՝ նվիրելով 50 աշխատանք՝ գեղանկարներ եւ գծանկարներ: Թանգարանի ստեղծման գաղափարն առկա էր դեռեւս 1927-ին, երբ Փարիզից եկած նամակներից մեկում վարպետը հույս է փայփայում Երեւանում ունենալ թանգարան: Մինչ այդ Սարյանի անմիջական օգնությամբ 1919-ին Ռուսովում բացվել էր նոր նախիջեւանյան գավառագիտական թանգարանը, իսկ 1921-ին՝ Հայաստանի առաջին պետական թանգարանը: Ներկայում թանգարանի ֆոնդն ունի 231 միավոր: Յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսին ՀՀ մշակույթի նախարարությունը ընտանիքի ֆոնդից գնում է Սարյանի ստեղծագործություններից ու նվիրում թանգարանին:

Թանգարանի տնօրեն **Ռուզաննա Սարյանը** երեկ նշեց, որ թանգարանը շարունակելու է այն լավագույն ավանդույթները, որ գոյություն են ունեցել Շահեն Խաչատրյանի օրոք եւ իր առջեւ դնում է խնդիրներ, որոնցից կարեւորագույնը վարպետի ստեղծագործությունների պահպանումն է ու վերանորոգումը: Շուտով կհրատարակվի Սարյանի նամակների եռահատորյակը, կյանքի լիակատար տարեգրությունն ու գիտական կենսագրությունը: Նպատակ կա ստեղծելու նրա ստեղծագործությունների լիակատար թվայնացված կատալոգ:

Այս տարի լրացավ մեծ վարպետի տուն-թանգարանի հիմնադրման 40-ամյակը: Այդ առիթով երեկ թանգարանում տեղի ունեցավ մշակութային հանդիսություն՝ ներկայությամբ ՀՀ առաջին տիկին Բելա Քոչարյանի, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի, արվեստագետների ու ընկերների:

«Այս հոբելյանն արժեւավոր է երկու առումով: Հերթական անգամ հիշում ենք մեծանուն վարպետին ու խոնարհվում նրա մեծության առաջ եւ հիանում, որ քաղաքի կենտրոնում ունենք մշակութային հզոր օջախ, որ նկարչի ինքնատիպ արտահայտությունն է, ուր հայրենի հողի գույներն են ու հայ ժողովրդի հոգու ջերմությունը», ասաց մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը**:

«Սարյանը բացառիկ դեր ունի կերպարվեստի զարգացման, պահպանման գործում: Երջանիկ եմ, որ բախտ եմ ունեցել շփվելու նրա հետ: Այդ շփումով եւս հայտնաբերեցի «նկարիչ» հասկացության իմաստը», ասաց ՀՀ նկարիչների միության նախագահ **Կարեն Ադամյանը**:

Էդվարդ Միրզոյանն էլ հիշում է վարպետի հետ անցկացրած օրերը, կտակները, «չարաճճիությունները», որոնց մասին պատմել չցանկացավ: «Թող մեր գաղտնիքը մնա»: «Ամեն անգամ այս օջախը մտնելիս զգում եմ վարպետի ունչը, նրա ներկերի հոտը: Գերագույն հաճույք ու հպարտություն է այն գիտակցումը, որ շփվել ու ընկերություն եմ արել հրաշալի մարդու հետ», ասաց **Ղուկաս Չուբարյանը**:

Թանգարանի հիմնադրման 40-ամյա հոբելյանի առթիվ տեղի ունեցավ նաեւ Սարյանի աշխատանքների փոտրիկ կատալոգի շնորհանդեսը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խմբ. կողմից- Միայն ափսոսալ կարելի է, որ 37 տարի Սարյան տուն-թանգարանի տնօրեն Շահեն Խաչատրյանի հասցեին, որ վարպետի 7 տասնյակից ավելի գործեր է հայտնաբերել ու միացրել թանգարանի հավաքածուին, որ տասնյակներով ցուցահանդեսներ է կազմակերպել, գրեր ու կատալոգներ հրատարակել եւ արժանապատիվ կերպով պանծացրել է վարպետի անունն աշխարհով մեկ, երեկվա հանդիսության ընթացքում չարժանացավ գնահատանքի ու երախտագիտության: Նույնը կատարվեց թանգարանի 40 տարվա աշխատակից, նախկին գլխավոր ֆոնդապահ եւ այնուհետեւ փոխտնօրեն Լուսյա Միրզոյանի նկատմամբ, որին հենց 40-ամյակի այս օրերն են հարմար գտել աշխատանքից ազատելու:

Հոգու լույսը գիրն է

Աշխարհը բեմ է ... Հավերժության դիմակահանդեսի մասնակիցները հերթով բարձրանում են այդ բեմի վրա ժամանակի ներկայության մեջ բացակա չհայտարարվելու համար եւ «Բաբելոնյան աշտարակի» օրենքով հեռանում են ժամանակից ...

Ջեռիս է Սամվել Կոսյանի բանաստեղծությունների նոր ժողովածուն՝ «Ցավի հետքը»: Էջ առ էջ թերթում եմ: Հետքերը այնքան ծանոթ են, քանզի իմ ազնիվ բարեկամի ու չխաղացող պոետի հետ անցել ենք փոքր պսակների միջով, ժողովրդի տառապանքի արցունքներով լվացել մեր վերքերը եւ հոգնություն բառի արմատից միայն հոգը վերցնելով միամտորեն կարծել ենք, որ մաքրում ենք ցավի հետքը ... Երկրորդ համաշխարհայինից հետո ծնված սերունդը իր երակներում մշտապես կրել է պատերազմի աղետի սարսափները: Կոսյանը այդ սերնդից է: Խաղաղության պատրանքներով սնված եւ ապահով կյանքի ծալքերը երջանկության երազանքներով հարթեցրած բանաստեղծը իր հասունությունն ապրեց պատերազմի, երկրաշարժի, հազարավոր զոհերի կորուստների ցավի մեջ: Հիշենք, թե ինչ ողբերգություն էր ապրում Վահան Տերյանը, գաղթ ու եղեռնի օրերի իր ժողովրդի ճակատագրի համար: Ազգային բանաստեղծ Սամվել Կոսյանը նույնպես չէր կարող անտարբեր մնալ իր ժողովրդի նոր ողբերգության հանդեպ եւ դառնությամբ ասում է. «Կյանքը կամավոր է մեզ որդեգրել եւ նա է բնության, աշխարհի ու մեր տերը»:

Մե՛րթ արեւելք, մե՛րթ արեւմուտք, մե՛րթ հյուսիս ու հարավ է տարփողվել մեր դրոը ու հայրենիքի ջղաձգումները տեսնել չկարողացող բանաստեղծը, ցավի դաշտի մեջ խելագարվելով չի կարողացել արտասվել,

որովհետեւ այն արտոնված է առողջներին: Գաղտնիք չէ, որ բանաստեղծը իր մենության լույսի մեջ միշտ ապահով է զգացել իրեն եւ դրանով էլ դարձել հետաքրքրելի, զի մենությունն ինքնին խոցելի է: Հեղինակը նրբանկատորեն խոստովանում է, որ իր պոեզիան «ճակատային է դարձել», որովհետեւ «փախցնողները իրենց բաժինը վերցնում են՝ կանգնելով պոեզիայի փխրուն ուսերի վրա...»:

Բանաստեղծության մեջ խոհականությունը միշտ էլ շարժիչ ուժն է եղել, իսկ նրա ընչառությունը իմաստության զգացմունքայնությամբ բաղխված փիլիսոփայությունն է. անհայտ է օրվա արյան գույնը, ինչպես գույնը մոծակների: Եղունգների հետքեր կան օրվա մաշկին եւ իմ նյարդերին: Տխուր ու անհեռանկար, դեռի հյուսիս ու հարավ տարուբերվող կուսակցական ագռավների ու մուրացկանների կողքին հեղինակը փնտրում է սկիզբը եւ որոնում մորը՝ լույսի ձեռքը բռնած, քանզի «կյանքի սահմանը անտեսանելի է» եւ «ժամանակի միտքը վիրահատության կարիք ունի»:

Հայրենիքին նվիրված բոցաշունչ բանաստեղծությունների փոխարեն բանաստեղծը ընդամենը երկու փակագիծ է բաց անում «Ընդմիջում-խաչբառում» (Մոլորակ, որ իմ Հայրենիքն է: Մարդաբանական ծառ, որի ճյուղերի միջով հոսում են ցեղի անունները) եւ այսպես՝ խաչբառ հանելուկի պատասխաններ, որոնցից յուրաքանչյուրը նրբանկատ ընթերցողին խորհելու տեղիք է տալիս: Այսպես, օրինակ՝ վարակի պես տարածվող դեմքի տեսակ, զգացում, որով սնվում են որդերը, հնարամտություն, որ գայլը կուշտ լինի, իսկ մենք չպակասենք ... Եվ այսպես կարելի է տող առ տող առանց թարգմանելու, ընթերցողին ներկայացնել նրա բառամթերքը, որի որակավորումն ու արժեքը միայն ճշմարիտ ընթերցողը կարող է գնահատել: Անկեղծ ասած, ներկայացնելով այն, ինչ որ կա եւ ողջունելով բանաստեղծ ընկերոջս, ուզում եմ հիշեցնել, որ բնապատկերների ու ալեգորիաների միջոցով տրամադրություն ստեղծելու վարպետ է նաեւ բանաստեղծ Ս. Կոսյանը. «Այս գեսը լեռան պարզած ձեռքն է ինձ, իսկ պարզած ձեռքը չի կարող այդքան երկար օդում մնալ, աչքերը՝ ցամաք ջրհորներ, սիրտը՝ անձրեւի հիթ մառախուղի մեջ, մարմինը խելագարության շուրջ պտտվող արբանյակ, օդը՝ կրակոցներով լի զամբյուղ, իշխանությունը՝ գայթակղիչ ու ախորժաբեր» եւ այլն:

Այո, որեւէ հիվանդության դեմ դեղահաբեր ընդունելուց առաջ, իսկապես անհրաժեշտ է գիրք կարդալ:

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐՅԱՆ

ՍՍՍՄԲՈՒԼ

«Ո՛վ, Հայոց աշխարհ»...

Օրերս Սամբուլի «Լյութֆի-Քիրդար» մեծ հանդիսասրահում տեղի ունեցավ համերգ, նվիրված Պոլսո «Սուրբ Երրորդություն» եկեղեցու հիմնադրման 200-ամյակին: Մասնակցում էին «Լուսավորիչ» երգչախումբը, մենակատարները:

Երգչախմբի գեղարվեստական ղեկավար եւ խմբավար Հակոբ Մամիկոնյանը համատեղ ելույթի համար հրավիրել էր նաեւ Սամբուլի պետական սիմֆոնիկ նվագախմբին:

Ծրագիրը բաղկացած էր հայ եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններից:

Դիտելով համերգի տեսագրությունը, ակամա հիշում ես բանաստեղծի հայտնի խոսքերը. «Ինչ կա ընդհանուր մեր միջեւ»...

Ինչն էր տվյալ դեպքում միավորել այս բեւեռները: Արդյոք Կոմիտասի «Հայրաքեսական մաղթանքը», որ երգվում է. «... Տեր, անտասան պահիր դու միշտ քո իսկ հիմնած Մայր Աթոռ», թե՞ Եկմալյանի «Ո՛վ, Հայոց աշխարհ» խմբերգը. «Ո՛վ, Հայոց աշխարհ... քո ազատ կյանքը... թող ծաղկի հավետ... դու ցնծա՜ դարեդար»:

Գուցե տողերիս հեղինակի բազմաձայնած «Շատախի պա՛րը», Պեշիկթաշլյանի «Եղբայր եմք մեք» ե՛րգը: Իսկ գուցե Տերունական աղո՛թքը, որով եզրափակվեց հանդիսությունը: «Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ», երգում ու նվագում էին հայերն ու թուրքերը միասին: Կարող է հարց ծագել, թե «չար» ասելով, ինչ նկատի ունեին կողմերը:

Նման մտքեր առաջին անգամ չէ, որ ծագում են: Մի առիթով, Հայաստանի երաժշտության տարեգրությունը ուսումնասիրելիս, ձեռս ընկավ Երկրորդ աշխարհամարտի օրերին լույս տեսած (Լենինականում) «Բանվոր» թերթի մի նմուշ: Նույն էջի վրա մի սյունակում կարդում ենք լուրեր ռազմաճակատից, մյուսում՝ Լենինականի երաժշտական ուսումնարանի հաշվետու համերգի մասին:

Ահավասիկ. «В течение 16 июля наши войска на Орловском участке фронта и Орловско-Курском направлении подбили и уничтожили 168 немецких танков. В воздушных боях и огнем зенитной артиллерии сбито 106 самолетов противника»: Եվ մյուսը. «... Ցորեն թավջութակահարներ կատարեցին Բախի «Արիան»... («Բանվոր», 18.07.1943): Անշուշտ, տարբեր են Բախի Գերմանիան եւ Հիտլերի Գերմանիան...

Դառնալով հիշյալ համերգին, նշենք, որ այն մեծ արձագանք է ունեցել: Նոյեմբերի 30-ի Սամբուլի «Ակօս» թերթը համերգը բնորոշել է որպես «Լուսավորիչ» երգչախմբի «սիմֆոնիկ ռենեսանս»: «... 79 տարվա «Լուսավորիչ» երգչախումբը, միանալով Սամբուլի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ, բերավ նոր շունչ հայկական եւ եվրոպական խմբերգերին ու մեներգերին... համերաշխ կատարելով գեղեցիկ մի համերգ»: Հանդիսությանը անդրադարձել են նաեւ «Ժամանակ» եւ

«Մարմարա» թերթերը: Վերջինս գրել է. «Մեծ նորույթ սամբուլահայ խմբերգային երաժշտության մեջ... Մամիկոնյանը ցույց տվեց, թե եթե իրեն ընծայվի նման առիթներ, պիտի բարձրացնե հայ երաժշտության մակարդակը Սամբուլի մեջ («Մարմարա», 26.11.2007)»:

Վերջերս Հակոբ Մամիկոնյանը Երեւանում էր եւ հանդիպման ժամանակ նշեց, որ «Լուսավորիչ» երգչախումբը մասնակցել է «Մեկ ազգ-մեկ մշակույթ» նախագծի փառատոնին, ելույթ ունեցել հենց Երեւանի «Սուրբ Լուսավորիչ» եկեղեցում: Իսկ Սամբուլի համերգի կապակցությամբ նա ասաց հետեւյալը. «Այս համերգը երազ էր... Ունինք մի երկրորդ, ավելի գունավոր երազ, որն է՝ նույն համերգը կրկնել Հայաստանի մեջ, Երեւանի սիմֆոնիկ նվագախմբի մի կազմի հետ: Կուզեինք այս համերգը իրականացնել «Մեկ ազգ-մեկ մշակույթ» երրորդ փառատոնի ընթացքին: Մեր նպատակն է զորացնել Հայաստան-Սփյուռք համագործակցությունը, ցույց տալ, թե Սամբուլի մեջ ալ հայ երգը կարդի»:

ԳՈՌԻՆ ԵՐԱԶԻՇԸ

Երեւանում հանդես կգա դաշնակահար Բ. Բերեզովսկին

ԵՐԵՎԱՆ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «21-ի հեռանկարներ» 7-րդ միջազգային փառատոնի շրջանակներում այսօր, դեկտեմբերի 19-ին, «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահում տեղի կունենա աշխարհահռչակ դաշնակահար Բորիս Բերեզովսկու համերգը, որին կմասնակցի նաեւ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդվարդ Թոփչյանի գլխավորությամբ: Ծրագրում ընդգրկված են Արամ Խաչատրյանի «Դաշնամուրային կոնցերտը» եւ «Երկրորդ սիմֆոնիան»:

Դեկտեմբերի 20-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կկայանա նրա երկրորդ համերգը, որում ընդգրկված կլինեն «Մուսորգսկի. պատկերներ ցուցահանդեսից» հայտնի երաժշտական ծրագիրը եւ Շոպենի բազմաթիվ ստեղծագործություններ: Ինչպես տեղեկացրեց փառատոնի գլխավոր մենեջեր **Սոնա Հովհաննիսյանը**, այս համերգը 2007-ի վերջին ծրագիրն է «21-ի հեռանկարներ» միջազգային փառատոնի շրջանակներում, որը մեկնարկել էր փետրվարի 1-ից:

Նշենք, որ փառատոնն այս տարվա հոկտեմբերի 1-ից դարձել է Եվրոպական միության փառատոնային ասոցիացիայի անդամ:

Լրագրողների ընտրյալը Գեւորգ Դավթյանն է

Որոշվել են հանրապետության 10 լավագույն մարզիկները

Մրցաշրջան-2007-ը հաստատես հաջող էր հայ ծանրորդների համար, ովքեր միջազգային տարբեր մրցաշարերում ընդհանուր առմամբ 47 մեդալ նվաճեցին: Ուստի զարմանալի չէ, որ մարզական լրագրողների հայկական ֆեդերացիայի անցկացրած ավանդական հարցման արդյունքներով Հայաստանի 2007-ի լավագույն մարզիկ ճանաչվեց մինչեւ 77 կգ քաշային ծանրորդ Գեւորգ Դավթյանը: Նրա գլխավոր մրցակիցն էլ ծանրամարտի ներկայացուցիչ էր՝ Հռիփսիմե Խուրշուդյանը: Գեւորգը վաստակեց 454 միավոր՝ 2-րդ տեղում թողնելով Հռիփսիմեին (328):

Գեւորգ Դավթյանը, որ նախորդ տարի 10 լավագույնների ցանկում 4-րդ տեղն էր զբաղեցրել, զարգամիտ հիանալի մրցաշրջան անցկացրեց: Ամրիլին Սրաստբուրգում կայացած Եվրոպայի մեծահասակների առաջնությունում գյումրեցի ծանրորդը երկամարտի 363 կգ (166+197) արդյունքով չեմպիոն հռչակվեց՝ 2 կգ-ով գերազանցելով իր հայրենակից Արա Խաչատրյանին: Թայլանդում տեղի ունեցած աշխարհի առաջնությունում էլ Գեւորգը շատ մոտ էր ոսկե մեդալին: Նա երկամարտում ցույց տվեց 362 կգ (164+198) արդյունք եւ ընթանում էր առաջին տեղում: Միայն վերջին պահին բուլղարացի Իվան Սոյչովին հաջողվեց 1 կգ-ով գերազանցել հայ ծանրորդի ցուցանիշը ու նրանից խլել ոսկե մեդալը: Գեւորգը սիրված էր բավարարվել արծաթե մեդալով:

Լավագույն մարզիկների տասնյակում 2-րդը ճանաչված Հռիփսիմե Խուրշուդյանը եւս հիանալի հանդես եկավ: Թեեւ աշխարհի մեծահասակների առաջնությունում նրան չհաջողվեց մրցանակակիր դառնալ (4-րդ տեղ), բայց Եվրոպայի մեծահասակների, աշխարհի ու Եվրոպայի երիտասարդների առաջնություններում ճանաչվեց ուժեղագույնը՝ արժանանալով չեմպիոնի ոսկե մեդալներին:

Լավագույն եռյակը եզրափակել է հունահռոմեական ոճի ըմբիշ, ռուսաստանցի Յուրի Պատրիկեեւը (281 միավոր), որը մեր ըմբիշներից Բաքվում կայացած ըմբշամարտի աշխարհի առաջնությունում մեդալ (բրոնզե) նվաճած միակ մարզիկն էր: Նա նաեւ Պեկինի օլիմպիադայի ուղեգիր նվաճեց: Լավագույն տասնյակում տեղ են գտել նաեւ գյումրեցի ծանրորդուհի, Եվրոպայի մեծահասակների չեմպիոնուհի, Եվրոպայի երիտասարդական առաջնության արծաթե մրցանակակիր Մելինե Դալուզյանը (253 միավոր), գյումրեցի ձյուդոյիստ, Եվրոպայի փոխչեմպիոն, երեւանյան միջազգային մրցաշարի 2-րդ մրցանակակիր, աշխարհի գավաթի խաղարկության 2 փուլի հաղթող, օլիմպիական ուղեգիր ձեռք բերած Հովհաննես Դավթյանը (240), Ֆրանսիայում բնակվող առագաստանավորդուհի, աշխարհի եւ Եվրոպայի փոխչեմպիոնուհի Սառա Հեբերս Ջոնսոնը (187), երեւանցի շախմատիստ, Եվրոպայի թիմային եւ ակումբային առաջնությունների բրոնզե մեդալակիր Էլինա Դանիելյանը (129), գյումրեցի ծանրորդ, Եվրոպայի փոխչեմպիոն Արա Խաչատրյանը (118), երեւանցի գրոսմայստր, մի շարք մրցաշարերի հաղթող Լեւոն Արոնյանը (114), եւ գյումրեցի ծանրորդ, Եվրոպայի փոխչեմպիոն Տիգրան Մարտիրոսյանը (96):

Մարզասերներին հիշեցնենք, որ նախորդ երկու տարիներին Հայաստանի լավագույն մարզիկ էր ճանաչվել Լեւոն Արոնյանը: Հարցման մասնակից 46 լրագրողները տարվա լավագույն թիմ են ճանաչել շախմատի տղամարդկանց հավաքականին (105 միավոր), որը Եվրոպայի թիմային առաջնությունում 2-րդ մրցանակակիր էր դարձել: 2-րդ տեղում շախմատի կանանց հավաքականն է (73), որը Եվրոպայի թիմային առաջնության 3-րդ մրցանակակիրն է: Լավագույն եռյակը եզրափակել է ծանրամարտի ազգային հավաքականը (69): Հարցաթերթիկներում նշվել են եւս 15 մարզիկների անուններ: Շնորհավորում ենք մեր լավագույն մարզիկներին՝ օլիմպիական տարում նրանց նորանոր հաջողություններ մաղթելով: Տարեվերջյան հանդեսում նրանք համապատասխան դրամական պարգեւներ կստանան ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանից:

Մասսայական ֆիզկուլտուրան ու սպորտը քննարկման առարկա

«Հայաստան» մարզական միության նախագահ Ռազմիկ Ստեփանյանի նախաձեռնությամբ երեկ «Երեւան» հյուրանոցում «Ֆիզիկական կուլտուրան եւ սպորտը որպես հասարակության առողջ ապրելակերպի երաշխիք: Մանկապատանեկան սպորտի զարգացման հիմնախնդիրները» թեմայով քննարկում էր կազմակերպվել: Միջոցառմանը մասնակցեցին մարզական ոլորտի պատասխանատուներ, լրագրողներ:

Ռազմիկ Ստեփանյանը նշեց, որ բոլորն էլ քաջ գիտակցում են ֆիզկուլտուրայի եւ սպորտի դերը հասարակության առողջ ապրելակերպի ձեւավորման հարցում: Այս ուղղությամբ թեեւ զգալի աշխատանք է տարվել, սակայն դա դեռեւս բավարար չէ: Վերջին տարիներին Հայաստանի կառավարությունը զգալի աշխատանք է տարել սպորտի նյութատեխնիկական բազան ամրապնդելու, մասսայական մարզական միջոցառումների քանակն ու մասնակիցների թիվն ավելացնելու, ֆիզիկական կուլտուրան ու սպորտը պրոպագանդելու, բնագավառի օրենսդրական դաշտը ձեւավորելու գործում: Այս գործում անմասն չեն մնացել նաեւ ՀԱՕԿ-ը, մարզական միությունները ու տարբեր մարզաձեւերի ֆեդերացիաները, որոնք զգալի աշխատանք են տանում բնակչությանը զանազան միջոցառումներին մասնակից դարձնելու հարցում:

ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Խաչիկ Ասրյանը կարեւորեց գյուղական, քաղաքային համայնքների կողմից կազմակերպվող մի շարք մրցումների անցկացումը, ազգային մարզաձեւերի փառատոնի կազմակերպումը, Երեւանի հանրակրթական դպրոցների մարզական խաղերի անցկացումը, որոնք եւս նպաստում են մասսայական ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացմանը:

Լուրջ հիմնախնդիր է դպրոցներում եւ բուհերում ֆիզկուլտուրայի առարկայի դասավանդումը, դասերի անցկացման համար մարզադահլիճների ոչ բավարար քանակը, դրանց անմխիթար վիճակը: Նշվեց, որ ուսուցիչների աշխատավարձերի բարձրացումը որոշ չափով նպաստեց դպրոցներում ֆիզկուլտուրայի ուսուցիչների թվաքանակի ավելացմանը: Եթե մի քանի տարի առաջ դպրոցներում ֆիզկուլտուրայի ուսուցիչների 120 թափուր տեղ կար, ապա այժմ գրեթե լիովին զբաղեցված են: Ցավոտ հարց է մնում մարզիչների ցածր աշխատավարձը (միջինը՝ 30 հազար դրամ), որի պատճառով ֆիզկուլտուրայի ինստիտուտի շատ շրջանավարտներ բուհն ավարտելուց հետո չեն ցանկանում իրենց մասնագիտությամբ աշխատել: Այս մասին խոսեց ֆիզկուլտուրայի ինստիտուտի ռեկտոր Վահրամ Առաքելյանը: Նշվեց նաեւ, որ առողջ ապրելակերպի մասին ժամանակակից գրականության խիստ կարիք է զգացվում, իսկ հանրակրթական դպրոցների դասագրքերում գրեթե նյութեր չկան սպորտի եւ մեր մարզիկների վերաբերյալ:

Գյուղական համայնքներում մասսայական ֆիզկուլտուրայի եւ սպորտի վիճակին անդրադարձավ «Սեւան» մարզական ընկերության նախագահ Ռոբերտ Տիգրանյանը: Նա ցավով նշեց, որ ներկայում գյուղերում իսպառ վերացվել են ֆիզկուլտուրայի հրահանգիչների հաստիքները, մինչդեռ նախկինում նրանց թիվը հասնում էր 700-ի:

Իհարկե, թեման շատ ընդգրկուն էր եւ մեկ հանդիպման ժամանակ դժվար էր հուզող բոլոր հարցերին պատասխան գտնելը: Կարծում ենք, որ նման քննարկումները շարունակական կլինեն:

Մարադոնայի դաջվածքների թիվը կավելանա

Համաշխարհային ֆուտբոլի լեգենդներից մեկը՝ Դիեգո Մարադոնան որոշել է ամբողջացնել իր դաջվածքների հավաքածուն: Նա ցանկություն է հայտնել մարմնի վրա դաջել Վենեսուելայի նախագահ Յուգո Չավեսին:

Մարադոնայի մարմնին արդեն երկու հանրահայտ անձնավորության դիմանկար կա դաջված: Նրա աջ ուսին դաջված են կուբացի հայտնի հեղափոխական Էռնեստո Չե Գեւարայի, իսկ ձախ ոտքին՝ Կուբայի առաջնորդ Ֆիդել Կաստրոյի դիմանկարները: Վերջինիս հետ Մարադոնան ծանոթացել էր, երբ Կուբայում բուժվում էր թմրամոլությունից: Այն ժամանակ նրանք մտերմացան: Առայժմ Մարադոնան չի ճշտել, թե իր մարմնի ո՞ր մասում եւ երբ է հայտնվելու Յուգո Չավեսի դաջվածքը:

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Կական լավագույնն է նաեւ աշխարհում

Իտալական «Միլանի» եւ Բրազիլիայի հավաքականի կիսապաշտպան Կական շարունակում է ավելացնել տիտղոսների թիվը: Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի համար սահմանված «Ոսկե գնդակ» մրցանակին արժանանալուց հետո Կական ճանաչվել է նաեւ 2007-ի աշխարհի լավագույն ֆուտբոլիստ: Հարցմանը մասնակցել են աշխարհի 160 երկրների հավաքականների գլխավոր մարզիչներն ու ավագները: Հարցաթերթիկներում Կակայի ազգանունը 179 անգամ նշվել է առաջինը, 42 անգամ՝ 2-րդը, 26 անգամ՝ 3-րդը: Արդյունքում նա վաստակել է 1047 միավոր: Կական զգալիորեն առաջ է անցել 2-րդ տեղը գրաված «Բարսելոնի» արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսիից (504 միավոր): Եռյակը եզրափակել է «Մանչեսթր Յունայթեդի» պորտուգալացի կիսապաշտպան Քրիսթիանու Ռոնալդուն (426): Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Դիդյե Դրոգբան (Կոտ դ'Իվուար)՝ 209, Ռոնալդինյոն (Բրազիլիա)՝ 109, Սթիվեն Ջերարդը (Անգլիա)՝ 68, Թյերի Անրին (Ֆրանսիա)՝ 57, Անդրեա Պիռլոն (Իտալիա)՝ 54, Ֆաբիո Կանավարոն (Իտալիա)՝ 47 եւ Ջանլուիջի Բուֆոնը (Իտալիա)՝ 31:

Ընդհանուր առմամբ հարցաթերթիկներում նշվել է 30 ֆուտբոլիստի ազգանուն: ՀՀ հավաքականի մարզիչ Վարդան Մինասյանն ու ավագ Սարգիս Հովսեփյանը հարցաթերթիկում նշել են միեւնույն եռյակը. Ռոնալդու, Կակա, Մեսի:

Մրցաշրջան-2007-ի դափնեկիրների պարգեւատրման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ Ցյուրիխում: Հատուկ մրցանակներ սպասցան մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնության լավագույն ֆուտբոլիստ ճանաչված Սերխիո Ագուերոն («Ատլետիկո» Մադրիդ), մինչեւ 17 տարեկանների աշխարհի առաջնության լավագույն ֆուտբոլիստ, գերմանացի Տոնի Կրոսը, ինչպես նաեւ լողափային ֆուտբոլի աշխարհի առաջնության լավագույն ֆուտբոլիստ ու ռմբարկու, բրազիլացի Բուրուն:

«Ազնիվ խաղի» մրցանակը հանձնվեց իսպանական «Բարսելոնին», որը հրաժարվել է իր պաշտոնական հովանավորից եւ ֆուտբոլիստների մարզաշապիկներին տեղադրել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի խորհրդանշանը: Մրցանակը ստացավ ակումբի նախագահ Ժոան Լապորտան: Իսկ ՖԻՖԱ-ի նախագահի հատուկ մրցանակին արժանացավ աշխարհի եռակի չեմպիոն, 20-րդ դարի աշխարհի լավագույն ֆուտբոլիստ Պելեն, որն արցունքներն աչքերին Յոզեֆ Բլաթերից ընդունեց պարգեւը: Լավագույն կին ֆուտբոլիստի մրցանակին 2-րդ տարին անընդմեջ արժանացավ բրազիլացի Մարթան:

Աշխարհի լավագույն ֆուտբոլիստի տիտղոսը շնորհվում է 1991-ից: 8-րդ անգամ գլխավոր մրցանակին արժանացավ բրազիլացի ֆուտբոլիստը: Կական այդ տիտղոսին արժանացած բրազիլացի 5-րդ ֆուտբոլիստն է Ռոմարիոյից, Ռոնալդոյից, Ռիվալդոյից եւ Ռոնալդինյոյից հետո: Առավել հաճախ՝ 3-ական անգամ աշխարհի լավագույն ֆուտբոլիստ են ճանաչվել Ռոնալդոն (1996, 1997, 2002-ին) եւ Զինեդին Զիդանը (1998, 2000, 2003-ին): Կական դարձավ 12-րդ դափնեկիրը:

2007-ը շատ արգասաբեր էր Կակայի համար: Նա «Միլանի» կազմում դարձավ չեմպիոնների գավաթակիր, Եվրոպայի Սուպերգավաթակիր եւ աշխարհի ակումբային առաջնության հաղթող: Իրոք որ Կական 2007-ի աշխարհի լավագույն ֆուտբոլիստն է: «Այսօր յուրօրինակ երեկո է ինձ համար: Երբ փոքր էի, երազում էի խաղալ իմ երկրպագած «Սան Պաուլուի» կազմում եւ գոնե մեկ անգամ Բրազիլիայի հավաքականի մարզահագուստով խաղադաշտ դուրս գալ: Կարողացա հասնել դրան եւ իմ առջեւ նորանոր նպատակներ դրեցի: Այս ամենը վկայում է, որ Աստված մեզ ավելին է տալիս, քան մենք մտածում ենք: Այդպես տեղի ունեցավ ինձ հետ: Յուրաքանչյուր տիտղոս ինձ համար նվիրական է յուրովի: Սա առանձնապես, քանի որ շնորհվել է ֆուտբոլը լավ տիրապետող մարդկանց կողմից: Շնորհակալ եմ «Միլանից» ու Բրազիլիայի հավաքականից: Իհարկե, ուրախ եմ, որ նրանց հաջողություններում իմ ներդրումն էլ կա», մրցանակը ստանալուց հետո հայտարարել է Կական:

Աշխարհի լավագույն ֆուտբոլիստները

1991	Լոթար Մաթեուս	Գերմանիա
1992	Մարկո վան Բաստեն	Հոլանդիա
1993	Ռոբերտո Բաջիո	Իտալիա
1994	Ռոմարիո	Բրազիլիա
1995	Ջորջ Վեա	Լիբերիա
1996	Ռոնալդո	Բրազիլիա
1997	Ռոնալդո	Բրազիլիա
1998	Զինեդին Զիդան	Ֆրանսիա
1999	Ռիվալդո	Բրազիլիա
2000	Զինեդին Զիդան	Ֆրանսիա
2001	Լուիս Ֆիգու	Պորտուգալիա
2002	Ռոնալդո	Բրազիլիա
2003	Զինեդին Զիդան	Ֆրանսիա
2004	Ռոնալդինյո	Բրազիլիա
2005	Ռոնալդինյո	Բրազիլիա
2006	Ֆաբիո Կանավարո	Իտալիա
2007	Կական	Բրազիլիա

Ռուսները կրկնեցին հաջողությունը

Ռուսաստանի ձեռքի գնդակի կանանց հավաքականը երկրորդ անգամ անընդմեջ նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Փարիզում կայացած եզրափակիչ խաղում ՌԴ հավաքականը չեմպիոնի տիտղոսը վիճարկեց Եվրոպայի չեմպիոն Նորվեգացիների հետ: Անցած տարվա դեկտեմբերին Նորվեգիայի հավաքականը Եվրոպայի առաջնության եզրափակիչում հաղթել էր հենց ռուսներին (27-24) եւ Պեկինի օլիմպիադայի ուղեգիր նվաճել:

Փարիզում ՌԴ հավաքականը Եվգենի Տրեֆիլովի գլխավորությամբ ռեւանշի հասավ մրցակցի նկատմամբ (29-24) եւ 2008-ի ամառային օլիմպիական խաղերի ուղեգիր նվաճեց: Ռուսաստանցի ձեռնագնդորդուհիներն առաջին անգամ կմասնակցեն օլիմպիադային: Բրոնզե մրցանակակիր դարձավ Գերմանիայի ընտրանին, որը լրացուցիչ ժամանակում 36-35 հաշվով առավելության հասավ ռումինացիների նկատմամբ:

Աշխարհի առաջնության խորհրդանշական հավաքականը հետեւյալ տեսքն ունի. Վալերի Նիկոլյա (Ֆրանսիա), Անիտա Գորբին (Ռումինիա), Իոնելա Ստանկա (Ռումինիա), Պոլինա Վյախիրեւա (Ռուսաստան), Գրո Համերսենգ (Նորվեգիա), Յանա Ուսկովա (Ռուսաստան), Գրիտ Յուրակ (Գերմանիա): Մրցաշարի լավագույն խաղացող է ճանաչվել Նորվեգուհի Կաստյա Նիբերգը: 85 գնդակով լավագույն ռմբարկուի տիտղոսը նվաճեց գերմանուհի Գրիտ Յուրակը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Հայ-ադրբեջանական սիրահետումներ բլեյանական ձեւով եւ բրիտանական ֆինանսավորմամբ

Ծրագիր, որի կազմակերպիչներին մի խումբ երիտասարդներ օձառներ են նվիրել

Արդեն բոլոր լրատվամիջոցները պատմել են Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում կազմակերպված «Ադրբեջանական օրերի» մասին, որի շրջանակներում ամփոփվել են «Բաց նամակ Ադրբեջանի իմ հասակակցին», «Ադրբեջանն իմ պատկերացմամբ», «Հայաստան-Ադրբեջան՝ ո՞ՐՆ է մեր առաջան» շառադրությունների, պլակատի եւ նկարի մրցույթների հաղթողները:

«Կրթական կամուրջներ» կրթատեղեկատվական եւ հետազոտական-ստեղծագործական ծրագիրը 7-12-րդ դասարանցիների համար է եւ նոյնպես ունի հինգ պետությունների (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա, Իրան) պատանիների, նրանց միջոցով նաեւ ուսուցիչների եւ ծնողների միջեւ փոխադարձ իմացության եւ համագործակցության մթնոլորտ ձեւավորելու: Հետաքրքրվենք մեկմեկով, կներե՛ք, մեզ իրար պարտադրենք, հրամցնենք, օգնենք իրար՝ բոլոր բնագավառներում եւ մակարդակներում իրար ճանաչելու: Հարգենք, հետաքրքրվենք, որ ճանաչենք միմյանց, եւ վստահ եղեք, որ կուժեղանա հարգանքն ու կմեծանա հետաքրքրությունը: Անկեղծ ու բաց սրտով պիտի մոտենանք մեր հարեւան ժողովուրդներին, բոլորին, իհարկե նաեւ մեր դրկից ադրբեջանցիներին: Մեր պատմական բեռը, մեր ժողովուրդների պատմությանն ուղեկցող «ռազբիրատը» թույլ չեն տալիս մեզ ժամանակակցի մեր կյանքով ապրելու եւ մեր՝ այսօրվա մարդու եւ հասարակության խնդիրներով զբաղվելու: Թոթափենք մեր պատմական բեռը, որպես ճամփորդն է թոթափում իր կոշիկների փոշին, այսո՞ր ապող մարդիկ, ապրենք մեր անհատական կյանքը, լուծենք իրական խնդիրներ»: Սա մասնակի մեջբերում էր Աշոտ Բլեյանի ելույթից, որ օրեր առաջ հնչել է «Կրթական կամուրջներ» ծրագրի բացման արարողության ժամանակ: Ով ինչպես է մեկնաբանում հնչած խոսքերն ու այլընտրանքային մտածողությամբ աչքի ընկնող մտավորականին ու մանկավարժին, այլ խնդիր է, սակայն կարեւոր է այն իմաստով, որ նոր մտածողություն եւ նոր մոտեցում է բերում մատաղ սերնդին, ով ուշի-ուշով կամ էլ պատանուն հատուկ անտարբերությամբ ականջի ծայրով լսում է տեղի ունեցածի մասին եւ ձեւավորում սեփական կարծիքը մինչ այդ բշնամի համավող հարեւանի նկատմամբ:

Ծրագիրը ֆինանսավորում է Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը: Մի քանի ադրբեջանցի մտավորականներ մի քանի օրով եկել են Հայաստան, որպեսզի հայերի հետ խոսեն ոչ թե բշնամու, այլ հարեւանի պես: Ցնայած նրանցից Սեյմուր Բայջան խոստովանեց, որ ինքը չի կարողացել Ադրբեջանում գտնել գոնե 3 պատմության ուսուցչի, որ կհամաձայնեին Թբիլիսիում հանդիպել իրենց հայ կոլեգաների հետ եւ քննարկել իրական, եղած պատմության մասին հարցերն ու դրանց մատուցման մեթոդները իրենց աշակերտների համար, եւ **«Ազգի»** հետ առանձնազրույցում նա կարեւորեց հանդիպումը: «Ճիշտ է, ապրումների մասին ոչինչ չեմ կարող ասել, բայց փաստ է, որ ինտերնետի միջոցով շատ մարդիկ արդեն շփվում են առանց մեր միջնորդության էլ: Իսկ այսպես ուշադրության կենտրոնում գտնվելով շփվել, հասկացես այն առաջարկը, որ դրվում արեցիք (նկատի ունի հայկական կողմի առաջարկը- Ս. Մ.) միասնական պատմություն գրելու վերաբերյալ, համարում եմ արկածախնդրություն: Կա այսպիսի սովետական անեկդոտ: Մի զինվոր գում է, որ մի օր իրենք են հարձակման ենթարկել թշնամուն եւ առաջ անցնելով 20 կիլոմետր՝ գրավել անտառը, մյուս օրը թշնամին է իրենց գրաված 20 կմ գրավել եւ այսպես շարունակ: Ուշագրավ է վերջին գրառումը: 9 մայիսի: Եկավ անտառապահը եւ մեզ ու մեր թշնամուն վտարեց անտառից, ասելով՝ դրվ երկրորդ էլ ինձ ձանձրացրիք: Նույնն էլ մեր պատմությունն է, ինչպես որ եղավ 20-ական թվականներին: Մենք շատ ռոմանտիկ տրամադրություններ չունենք: Սա ընդամենը ծրագիր է, որ այստեղ գոնե մի փոքրիկ դռրոցում թշնամու կերպարը ջարդենք: Այստեղ դեռ հնարավոր է, իսկ այնտեղ (Ադրբեջանում- Ս. Մ.) անհնար է: Մենք փորձում ենք, իսկ փորձը փորձանք չէ»:

Հետաքրքրական էր նաեւ Մխիթար Սեբաստացի դպրոցի տնօրեն Աշոտ Բլեյանի կարծիքը հայ-ադրբեջանական հարաբերությունների ձեւավորման մասին: Նա դրանց վերականգնման եւ բարեկամության անխոնջ մշակն է համարվում արդեն 20 տարի եւ հավատացրեց մեզ, որ դա իր սկզբունքն է եւ անում է առանց որեւէ դրամական ակնկալիքի:

Նրա դպրոցի սաների կարծիքը «Քայլ դեպի երկխոսություն» ծրագրի շրջանակներում անցկացված միջոցառումների մասին եւ հետաքրքրական է, եւ բազմազան: Երեկվա միջոցառմանը լուռ մասնակից երեխաները սիրով պատասխանեցին «Ազգի» հարցերին եւ նույնիսկ բանավեճի բռնվեցին միմյանց հետ, թե արդյոք ադրբեջանցին կարո՞ղ է իրենց անվերապահ բարեկամը լինել, թե ոչ:

«Մինչեւ վերջերս ադրբեջանցին մարդ էր սպանել արտասահմանում: Նրա անունով շատերն անվանակոչում էին իրենց երեխաներին», վերհիշում է մի օրիորդ: «Տեղյակ եմ, բայց դա իմ հասակակիցն է արել», ասում է 12-ամյա Սարիբեկյան Երվանդը: Այնուամենայնիվ, զրուցակիցներիս մեծամասնությունը պատրաստ են խոսելու իրենց հասակակիցների հետ եւ բարեկամանալու թեկուզ եւ ինտերնետով: Ելենա Չիլինգարյանն էլ կարծում է, որ «անկախ ամեն ինչից մենք հարեւաններ ենք: Դրանից ելնելով էլ մենք պետք է լեզու գտնենք իրար հետ: Մանավանդ, մենք երեխաներ ենք եւ մենք կարող չունենք 20 տարի առաջ եղած դեպքի հետ: Պետք չէ մոռանալ, բայց պետք չէ մեզ խառնել դրա մեջ», համոզված ասում է աղջիկը:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ուկրաինան ունի նոր վարչապետ

Երրորդ փորձից հետո նարնջագույնների առաջնորդ Յուլիա Տիմոշենկոյին հաջողվել է զբաղեցնել վարչապետի պաշտոնը, փաստորեն երկու տարի անց Տիմոշենկոն կրկին գլխավորում է Ուկրաինայի կառավարությունը: Նա դարձել է Ուկրաինայի 16-րդ վարչապետը: Հաղորդվում է, որ նրա օգտին է քվեարկել 450 պատգամավորից 226-ը: Տիմոշենկոն հայտարարել է, որ Ուկրաինայի նոր կառավարության համար առաջնային կլինեն էներգետիկական անվտանգության, դասական բարեփոխումների, ներդրումային կլիմայի բարելավման հարցերը:

Ամենաթանկ երկրները

Համաշխարհային բանկը հրապարակել է աշխարհի տնտեսությունների վիճակի մասին զեկույց, որտեղ համեմատված են նաեւ գների մակարդակները տարբեր պետություններում, որի հիման վրա բացահայտված են առավել կամ պակաս թանկ երկրները: Ըստ զեկույցի, Հարավային Կովկասում ամենաթանկ երկիրը Վրաստանն է, որի թանկության գործակիցը հավասար է 41-ի, Հայաստանինը՝ 39-ի, իսկ Ադրբեջանինը՝ 35-ի: Ապրելու եւ բիզնեսի համար ամենաթանկ երկրների հնգյակում են Իսլանդիան (154 բալ), Դանիան, Շվեյցարիան, Նորվեգիան եւ Իռլանդիան: Ռուսաստանի գնային ցուցանիշը հավասար է 45 միավորի, Ղազախստանինը՝ 43-ի, Բելառուսինը՝ 36-ի, Մոլդովայինը՝ 35-ի, Ուկրաինայինը՝ 33-ի: Լատվիան եւ Լիտվան ստացել են 53-ական միավոր, Էստոնիան՝ 62: Կյանքն առավել էժան է Տաջիկստանում (24), Ղրղզստանում (28 միավոր):

Երեք երեխա թունավորվել են շմոլ գազից

Դեկտեմբերի 17-ի կեսգիշերին շմոլ գազից թունավորմամբ Գյումրու Ավստրիական մանկական հիվանդանոց են տեղափոխվել Գյումրու Չերնիշեւսկու փողոցի թիվ 9 տան բնակիչներ 3-ամյա Նվարդ, 4-ամյա Մարիա Հակոբյանները, ինչպես նաեւ 13-ամյա Արմեն Աջամյանը: Ըստ բժիշկների, երեխաների վիճակը գնահատվում է բավարար:

Աղանություն

Դեկտեմբերի 17-ին ոստիկանության Բաղրամյանի բաժնում Դալարիկ գյուղի բնակիչ Էդիկ Հակոբյանից հաղորդում է ստացվել, որ եղբայրը՝ Սամվել Հակոբյանը, իրենց տանը հանկարծամահ է եղել: Ըստ դատաբժշկական փորձագետի եզրակացության, պարզվել է, որ 1970-ին ծնվ. Սամվել Հակոբյանի մահը վրա է հասել կրծքավանդակին սուր կտրող գործիքով հարվածելու հետեւանքով: Պարզվել է նաեւ, որ նախօրեին տանը վիճաբանության ժամանակ Ս. Հակոբյանին դանակահարել է եղբայրը՝ 1963-ին ծնվ. Սարգիս Հակոբյանը:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

Հարկայինի դեմ ԳԱԼԱ-ի հակընդդեմ հայցն ընդունվեց վարույթ

ՀՀ տնտեսական դատարանի Գյումրու նստավայրում երեկ կարճ տեւողությամբ շարունակվեց ԳԱԼԱ հեռուստաընկերության հիմնադիր «ՉԱՊ» ՍՊԸ-ի դեմ հարկային ծառայության հայցով նախօրյակին սկսված եւ հետաձգված դատավարությունը, որի առաջին նիստին պատասխանող կողմը հակընդդեմ հայց էր ներկայացրել հարկայինի դեմ:

Բացելով երեկվա դատական նիստը, նախագահող դատավոր Էդ. Նահապետյանն ընթերցեց այս հարցով դատարանի կայացրած որոշումը: Դրանում նշվում է, որ 2007-ի նոյեմբերի 27-ին ՀՀ տնտեսական դատարանի որոշմամբ վարույթ է ընդունվել Գյումրու հարկային տեսչության հայցադիմումն ընդդեմ «ՉԱՊ» ՍՊԸ-ի՝ 25 մլն 212,7 հազար դրամ բռնագանձելու պահանջի մասին: Մինչեւ սույն գործով վճիռ կայացնելը «ՉԱՊ» ՍՊԸ-ն, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասով եւ հիմք ընդունելով նույն օրենսգրքի 160-րդ հոդվածը, հակընդդեմ հայց է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության աշխատակազմի Գյումրու հարկային տեսչության, որով դատարանին խնդրել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության օպերատիվ հետախուզության վարչության 1-ին եւ Գյումրու մարզային բաժինների 2007-ի նոյեմբերի 12-ի հմր. 1034621 ակտը ճանաչել անվավեր: Քանի որ հակընդդեմ եւ սկզբնական հայցերի միջեւ առկա է փոխադարձ կապ ու դրանց համատեղ քննությունը կարող է աղահովել վեճի արագ ու ճիշտ լուծումը, դատավորը համարում է, որ հակընդդեմ հայցը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87, 88 եւ 96 հոդվածներով նախատեսված պահանջներին համապատասխան, ուստի պետք է ընդունել վարույթ եւ սկզբնական հայցի հետ համատեղ նշանակել դատաքննություն:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածներով, դատարանը որոշեց «ՉԱՊ» ՍՊԸ-ի հակընդդեմ հայցն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության աշխատակազմի Գյումրու հարկային տեսչության՝ 2007-ի նոյեմբերի 12-ի հմր. 1034621 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ եւ սկզբնական հայցի հետ համատեղ ընթացք տալ:

Իսկ այսօր ժամը 16-ին Գյումրու Թատերական հրապարակում անցկացվելու է ԳԱԼԱ-ի պատշգամբի ավելի վաղ նախաձեռնած հանրահավաքը:

Գ. Մ.

Արտակարգ շնորհավորանք

«Ազգ» օրաթերթի լավ բարեկամ, մեր գործընկեր, Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի խորհրդական, գնդապետ **Նիկոլայ Գրիգորյանը** դարձավ 50 տարեկան: Այդ առիթով, նաեւ ծառայության ընթացքում ցուցաբերած բարձր ցուցանիշների համար Նիկոլայ Գրիգորյանը պարգեւատրվել է անվանական զենքով:

«Ազգն» էլ, միանալով բազմաթիվ շնորհավորանքներին, մաղթում է Կոյային քաջ առողջություն եւ ցանկանում, որ անվանական զենքից միայն ուրախ առիթներով հնչեն (ավելի լավ՝ եթե չհնչեն) կրակոցներ եւ, որ ամենակարեւորն է, մեր երկիրը զերծ մնա արտակարգ իրավիճակներից:

«ԱԶԳ»

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԵՎՈՐ Է

«Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միությունը նոյտակահատարության տեսակետից հայտնում է.

- խորհուրդ չի տվում ծխահեռացման խողովակների միացումներն իրականացնել ծալվող փայլաթիթեղյա ճկուն խողովակներով:
- Գազասարքերի միացման թիթեղյա խողովակների հորիզոնական տեղամասերի ընդհանուր երկարությունը պետք է լինի 3.0 մետրից ոչ ավելի եւ ունենա 3-ից ոչ ավելի խողովակի տրամագծից ոչ պակաս կորացման շառավղով անկյունակներ:
- Միացման թիթեղյա խողովակները պետք է մտցվեն մեկը մյուսի մեջ դրանց տրամագծի կեսից ոչ պակաս չափով ծխագազերի շարժման ուղղությամբ:
- Միացված ծխահեռացման խողովակների ուղղահայաց տեղամասի չափը, հաշված գազասարքի ծխահեռացման կարճախողովակի հիմքից մինչեւ հորիզոնական մասը, պետք է լինի 0.5 մետրից ոչ պակաս, իսկ 2.7 մետր բարձրություն ունեցող շինություններում՝ 0.15 մետրից ոչ պակաս:
- Ծխահեռացման թիթեղյա խողովակների հորիզոնական տեղամասերը պետք է ունենան 1 գծամետրի վրա 1 սմ-ից ոչ պակաս թեքություն՝ դեպի տեղադրված գազասարքը:

ՄԻԱՑՄԱՆ ԹԻԹԵՂՅԱ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՄ ՔԵՎԱՔՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏՐԱՄԱԳԾԵՐԻ ՆԵՂԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԺԲԱԽՏ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՊԱՏՃԱՌ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ:

Արգելվում է օգտվել գազասարքերից, եթե՝

- ստուգված չէ ծխաօդատար ուղիների սարքինությունը,
- ծխաօդատար ուղիներում բացակայում է քարը կամ առկա է հետաղած քարը:

ՀՈԴՎԱԾԸ ԸՆԹԵՐՑԵԼԻՍ ԸՆԿԱԼԵՔ ՈՐՊԵՍ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԿՅՈՒՆ

«Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության խորհուրդ

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐԱՄՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երեւանի Աջափնյակ թաղային համայնքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ը գրասենյակային ապրանքներ եւ նյութեր, գույք եւ սարքավորում, փափուկ գույք եւ հանդերձանք, եւ այլ ծախսեր ձեռք բերելու համար «ԱԵՍՀԿ-08/3» ծածկագրով կազմակերպում են գնանշման հարցում:

Գնանշման հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Երեւանի ԱԵՍՀԿ» ՊՈԱԿ-ի «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ-ում ունեցած 16305-8150000 հաշվեհամարին կամ կանխիկ վճարել «Երեւան ԱԵՍՀԿ» ՊՈԱԿ-ին: Սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմել «Երեւանի ԱԵՍՀԿ» ՊՈԱԿ-ին՝ գնման մրցութային հանձնաժողովի քարտուղար Ս. Նավոյանին (հեռ. 091 221623):

Գնանշման հարցման հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը՝ 12-ը, «Երեւանի ԱԵՍՀԿ» ՊՈԱԿ-ին:

Դիմել Երեւան, Մարգարյան 35 գնման մրցութային հանձնաժողովի քարտուղար Ս. Նավոյանին:

www.azgdaily.com

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՄԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ասեփյան: Տիրաժը՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 18.12.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տարանում՝ Արշակունյաց 2: